

# ԳԵՐԲՆԱԿԱՆ ԿԵԱՆՔ

## ԱՌԱՋԻՆ ՊԱՀ

### Սուրբ Հոգին

#### ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆ

Մենք պիտի ստիպվենք Սուրբ Հոգիին պարգևներուն մասին՝ իբրև ապրելակերպ: Սուրբ Հոգիին պարգևները միայն այն երեսոյթները չեն, որ կը պատահին Կիրակի օրերը երգեցողութենէն ետք եւ յայտարարութիւններէն առաջ: Անոնք կեանքի ապրելակերպ մըն են:

Երբ մենք վերածնունդ ունեցանք, մեր հոգիները կենդանացան: Մենք ունինք շունչ եւ հոգի. հետեւաբար մենք հոգեւոր էակներ ենք: Ամէն օր մենք կ'ապրինք Աստուծոյ Գերբնական Հոգիին թագաւորութեան մէջ:

#### ԴԱՍԻ ՆԱԽԱԳԻԾ

##### I. ՃԱՆՉՆԱԿ ՍՈՒՐԲ ՀՈԳԻՆ

• Սուրբ Հոգին կազմուած է մըն է: Մենք պէտք է Անոր ծանօթանանք անձնական եւ մտերիմ ձեւով: Պօղոս առաքեալ գրեց Սուրբ Հոգիին հաղորդութեան մասին (Բ.Կր 13.13):

##### Ա. Կեանքի նոր ձեւ

1. Սուրբ Հոգիին պարգևները կեանքի ամբողջութեամբ նոր ձեւ մը կու տան հոգիով լեցուած հաւատացեալին:

ա. Այնպէս ինչպէս Պետրոս դուրս եկաւ նաւէն եւ ջուրին վրայէն փախաւ թիւս, մենք եւս մեր ոտքը դուրս պէտք է դնենք բնական կեանքի հանգիստէն եւ փախանք «հոգեւոր ջուրերու» վրայ:

բ. Մենք պէտք է հոգիով ապրինք եւ մեր աօրեայ կեանքին մէջ գործենք Անոր ինը գերբնական պարգևներով:

2. «Այն ատեն Տէրոջը Հոգին քեզ պիտի համակէ, անոնց հետ մարգարէութիւն պիտի ընես եւ ուրիշ մարդ մը պիտի դառնաս» (Ա.Թգ 10.6):

3. «Եւ ի՛նչ է իր (յարութեան) գերազանց մեծութիւնը հաւատացեալներուն մէջ...» (Եփ 1.19-20):

##### Բ. Յիսուս Իր երկրաւոր առաքելութիւնը կատարեց Սուրբ Հոգիով:

1. Ըստ Փլպ 2.5, Տիմ, երբ Յիսուս այս աշխարհ եկաւ, Ան Ինքզինք խոնարհեցուց եւ մարդացաւ:

ա. Ան ժամանակաւոր կերպով մէկ կողմ դրաւ իբրև Աստուծոյ Իր բոլոր իրաւունքներն ու առանձնաբերականները եւ ապրեցաւ իբրև մարդ մը այս աշխարհի վրայ:

բ. Ոչ մէկ արձարագրութիւն կայ Անոր կեանքի առաջին երեսուն տարիներուն կատարուած հրաշքի մը մասին:

գ. Երբ Ան մկրտուեցաւ Յովհաննէսին կողմէ, ըստ Մր 1.10-11ին, այն ատեն է, որ Սուրբ Հոգին հանգչեցաւ Անոր վրայ:

▪ Անմիջապէս հրաշքեր սկսան կատարուիլ Անոր առաքելութեան մէջ:

2. «Իսկայն ջուրէն դուրս ելլելով՝ տեսաւ երկինքը բացուած, եւ Հոգին՝ որ ազաւնիի պէս կ'իջնէր իր վրայ» (Մր 1.10):

ա. Յիսուս՝ մեր տիպար օրինակն է, որ գործեց Սուրբ Հոգիին օծությամբ եւ Անոր գերբնական պարգեւներով:

բ. «Տէրոջ Հոգին իմ վրաս է. որովհետեւ օծեց զիս աղփատներուն աւետարանելու, զրկեց զիս կոտրած սիրտ ունեցողները բժշկելու, գերիներուն՝ ազատ արձակում եւ կոյրերուն տեսողութիւն յայտարարելու, հարստահարութիւն կրողները ազատ արձակելու» (Ղկ 4.18-19):

Գ. Նոյն ուժը մեզի համար է այսօր:

1. «Եւ ի՛նչ է իր գորութեան գերազանց մեծութիւնը հաւատացեալներուս մէջ՝ գործադրութեան համեմատ իր ուժեղ գորութեան, որ ներգործեց Քրիստոսի մէջ՝ երբ մեռելներէն յարուցանեց զայն ու բազմեցուց իր աջ կողմը երկինքի մէջ» (Եփ 1.19-20):

2. «Ու եթէ Յիսուսը մեռելներէն յարուցանողին Հոգին բնակած է ձեր մէջ, ուրեմն ա՛ն՝ որ մեռելներէն յարուցանեց Քրիստոսը, կեանք պիտի տայ ձեր մահկանացու մարմիններուն՝ իր Հոգիով, որ կը բնակի ձեր մէջ» (Հո 8.11):

3. Յովէլ մարգարէացաւ. «Ատկէ ետք՝ իմ Հոգիս ամէն մարմնի վրայ պիտի թափեմ. ձեր որդիներն ու աղջիկները պիտի մարգարէանան, ձեր ծերերը երազներ պիտի տեսնեն, ձեր երիտասարդները տեսիլներ պիտի տեսնեն: Ծառներուն վրայ եւ աղաթիներուն վրայ ալ այդ օրերը իմ Հոգիս պիտի թափեմ» (Յվլ 2.28-29):

○ Յիսուս ըսաւ, թէ անոնք բարձրէն զրկուած գորութիւն պիտի հազնին (Ղկ 24.49):

## II. ՍՈՒՐԲ ՀՈԳԻՈՎ ՄԿԻՏՈՒԹԻՒՆ

Ա. Մարգարէութիւններուն մէջ նշուած էր:

1. Յովհաննէս ըսաւ. «Արդարեւ ես կը մկրտեմ ձեզ ջուրով, բայց ինձմէ աւելի հզօրը կու գայ, որուն կօշիկներուն կապերը քակելու արժանի չեն. անիկա՛ պիտի մկրտէ ձեզ Սուրբ Հոգիով ու կրակով» (Ղկ 3.16):

2. Յիսուս բացազանչեց՝ «Դուք շատ օրեր չանցած՝ պիտի մկրտուիք Սուրբ Հոգիով» (Գրծ 1.5):

Բ. Անիկա ուժն է Իր վկան ըլլալու:

● «Բայց Սուրբ Հոգին ձեր վրայ եկած ատենը՝ գորութիւն պիտի ստանաք, եւ ինձի համար վկաներ պիտի ըլլաք Երուսաղէմի մէջ, ամբողջ Հրէաստանի եւ Սամարիայի մէջ, եւ մինչեւ երկրի ծայրերը» (Գրծ 1.8):

Գ. Այդ մէկը սկսաւ Պենտեկոստէի օրը:

1. «Երբ Պենտեկոստէի տօնը հասաւ, ամէնքն ալ միաբան՝ մէկ տեղ էին: Յանկարծ շատաչ մը եղաւ երկինքէն՝ սաստիկաւորեց հովի մը ձայնին պէս, ու լեցուց ամբողջ տունը՝ ուր նստած էին: Եւ բաժնուած լեզուներ երեւցան իրենց՝ որպէս թէ կրակէ, ու հանգչեցան անոնցմէ իւրաքանչիւրին վրայ: Բոլորն ալ լեցուցան Սուրբ Հոգիով եւ սկսան խօսիլ ուրիշ լեզուներով, ինչպէս Հոգին իրենց խօսիլ կու տար» (Գրծ 2.1-4):

2. Հրաւր մը պատահեցաւ անոնց բերաններուն մէջ:

3. Պետրոս ուրիշներու յայտարարեց՝ «...պիտի ստանաք Սուրբ Հոգիին պարգեւը:» (Գրծ 2.38):

Դ. Սամարացիները ստացան այդ պարգեւը:

1. «Երբ Երուսաղէմի մէջ եղող առաքեալները լսեցին թէ Սամարացիները ընդունած են Աստուծոյ խօսքը, զրկեցին Պետրոսն ու Յովհաննէսը անոնց, որոնք հոն հասնելով՝ աղօթեցին անոնց համար, որպէս զի ստանան Սուրբ Հոգին: (Որովհետեւ դեռ անոնցմէ ոեւէ մէկուն վրայ իջած չէր, հապա միայն մկրտուած

էին Տէր Յիսուսին անունով: Այն ատեն իրենց ձեռքերը դրին անոնց վրայ, որ կը ստանային Սուրբ Հոգին»: (Գրծ 8.14-17)

2. Անիկա նուէր մըն է: Մենք պէտք չունինք աշխատելու՝ գայն ստանալու համար:

Ե. Հերանոսները ստացան այդ նուէրը:

1. «Մինչ Պետրոս կ'ըսէր այս խօսքերը, Սուրբ Հոգին իջաւ բոլոր անոնց վրայ՝ որ կը լսէին խօսքը: Թշվառուածներէն եղող բոլոր հաւատացեալները, որ եկած էին Պետրոսի հետ, գմայլեցան որ հերանոսներուն վրայ ալ թափուեցաւ Սուրբ Հոգիին պարգեւը. որովհետեւ կը լսէին թէ անոնք կը խօսէին ուրիշ լեզուներով եւ կը մեծարէին Աստուած» (Գրծ 10.44-46):

2. Մենք պարգապէս պէտք է ընդունինք նուէրը:

Զ. Եփեսացիները ընդունեցին նուէրը:

• «Ըսաւ անոնց. «Երբ հաւատացիք, արդեօք ստացա՞ք Սուրբ Հոգին»: Անոնք պատասխանեցին իրեն. «Բայց մենք լսած իսկ չենք՝ թէ Սուրբ Հոգի մը կայ»: Ան ալ ըսաւ անոնց. «Հապա ինչո՞վ մկրտուեցաք»: Անոնք պատասխանեցին. «Յովհաննէսի մկրտութեամբ»: Պօղոս ալ ըսաւ. «Յովհաննէս մկրտեց ապաշարութեան մկրտութեամբ, ըսելով ժողովուրդին որ հաւատան անոր՝ որ պիտի գար իրմէ ետք, այսինքն՝ Քրիստոս Յիսուսի»: Երբ ասիկա լսեցին՝ մկրտուեցան Տէր Յիսուսի անունովը. ու երբ Պօղոս ձեռք դրաւ անոնց վրայ՝ Սուրբ Հոգին եկաւ անոնց վրայ, եւ լեզուներ կը խօսէին ու կը մարգարէանային»: (Գրծ 19.2-6)

### III. ՍՈՒՐԲ ՀՈԳԻՒՆ ՊԱՐԳԵՒԸ ԽՆԴԻՆԸ

«Եթէ որդի մը հաց ուզէ ձեզմէ ունէ մէկէն՝ որ հայր է, միթէ քա՞նք պիտի տայ անոր. կամ եթէ ձուկ ուզէ, միթէ ձուկին տէ՞ր օձ պիտի տայ անոր. կամ եթէ հաւկիթ ուզէ, միթէ կարի՞նք պիտի տայ անոր: Ուրեմն եթէ դո՛ւք որ չար էք՝ զիտէ՞ք ձեր զաւակներուն բարի նուէրներ տալ, որչա՞նք աւելի ձեր Հայրը երկինքէն Սուրբ Հոգի՛ն պիտի տայ անոնց՝ որ կը խնայեն իրմէ» (Ղկ 11.11-13):

• Մեր Երկնաւոր Հայրը պատրաստ է նուէր մը տալու քեզի:

Ա. Լեզուներ խօսիլ

1. Անձանօթ լեզուով մը խօսելու ապացոյցը միշտ կ'ընկերանայ Սուրբ Հոգիին պարգեւը ստանալուն:

2. Յիսուս ըսաւ, թէ հաւատացեալներուն նշաններէն մէկը այն է, թէ՛ անոնք «...նո՛ր լեզուներ պիտի խօսին» (Մր 16.17):

3. Պօղոս գրեց, թէ ինք երկնային լեզուով մը կը խօսի, հրեշտակներու լեզուներով (Ա. Կր 13.1):

ա. Պօղոս բացատրեց, թէ այդ մէկը տեղի ունեցաւ Սուրբ Հոգիով, իր հոգիին ընդմէջէն, եւ ոչ միտքին:

բ. Հրեշտակները երբեք չեն դադարի Աստուած փառաբանելէ:

գ. «Քանի որ եթէ ես աղօթեմ անձանօթ լեզուով, հոգի՛ս կ'աղօթէ, բայց միտքս անպտուղ է» (Ա.Կր 14.14):

4. «Նոյնպէս Հոգին ալ կ'օգնէ մեր տկարութիւններուն մէջ. քանի որ չենք ի՛նչ բանի համար աղօթելու եւնք՝ ինչպէս պէտք է. բայց Հոգին ի՛նք կը բարեխօսէ մեզի համար՝ անբարբառ հառաչանքներով: Եւ ա՛ն, որ կը զննէ սիրտերը, զիտէ՞ Հոգիին ի՛նչ մտածելը, քանի որ կը բարեխօսէ սուրբերուն համար Աստուծոյ կամփին համաձայն» (Հո 8.26-27):

ա. Մենք պէտք է խօսքը ընդունինք եւ Հոգիով աղօթենք:

բ. «Եւ առէ՛ք փրկութեան սաղաւարտն ու Հոգիին սուրը՝ որ Աստուծոյ խօսքն է: Ամէն ատեն աղօթեցէ՛ք Հոգիով՝ ամէն տեսակ աղօթքով եւ աղերսանքով: Հսկեցէ՛ք ասոր վրայ բոլորովին յարատեւութեամբ ու աղերսանքով՝ բոլոր սուրբերուն համար» (Եփ 6.17-18):

**Բ. Մենք պէտք է սկսինք խօսիլ:**

1. Երբ Սուրբ Հոգիով լեցուչինք, մենք եւս պէտք է սկսինք խօսիլ ոչ թէ մեր սեփական լեզուով, այլ՝ «ուրիշ լեզուներով»:

ա. «Բուրբն ալ լեցուեցան Սուրբ Հոգիով եւ սկսան խօսիլ ուրիշ լեզուներով, ինչպէս Հոգին իրենց խօսիլ կու տար» (Գրծ 2.4):

բ. Կան երկու բաժիններ. Աստուծոյ բաժինը եւ մարդուն բաժինը:

2. Բուրբ լեզուները բառեր են, որ կազմուած են տարբեր ձայներու միացումով:

ա. Եթէ Հոգին մեզի կարողութիւնը կամ ձայնային ներշնչումը տայ, Պենտեկոստէի Օրուան պէս, մենք պէտք է սկսինք խօսիլ, բայց ոչ լեզուով մը, որ գիտենք:

բ. Մենք ալ, առաջին հաւատացեալներուն պէս, պէտք է սկսինք բարձրաձայն արտաբերել ձայները:

3. Մինչ կը սկսինք մեր աչքերը սեւեռել Յիսուսին, հաւատով խնդրած եւ ստացած ըլլալով Սուրբ Հոգիին մկրտութիւնը, մենք պէտք է սկսինք խօսիլ:

ա. Մենք է, որ պիտի խօսինք, ինչպէս ըրին Պենտեկոստէի Օրը, բայց Սուրբ Հոգին այդ միջոցին պիտի սկսի կարողութիւնը տալ մեզի:

բ. Խօսիլ սկսելով մեր բաժինը ըրած ըլլալով, Աստուած Իր բաժինը պիտի ընէ եւ մեզի տայ կարողութիւնը: Հաւատքի այդ պահուն հրաժեմ մը տեղի պիտի ունենայ մեր բերաններուն մէջ:

4. Ըրէ՛ հետեւեալ աղօթքը՝

Սիրելի Երկնաւոր Հայր,

Շնորհակալ եմ փրկութեան պարգեւին համար:

Բայց, Հայր, ես կ'ուզեմ ստանալ բուրբ պարգեւները, որ ունիս ինծի համար: Ես Քու Սուրբ Հոգիի պարգեւը կ'ուզեմ: Ես իմ կեանքիս մէջ պէտք ունիմ այդ ուժին:

Յիսուս, Քեզմէ կը խնդրեմ, որ մկրտես զիս Սուրբ Հոգիով: Ես հաւատով կ'ընդունիմ այդ պարգեւը:

Ճիշդ այս պահուս, Հայր, ձեռքերդ վեր կը բարձրացնեմ փառաբանելու համար Քեզ: Ես շքանկներս լայն կը բանամ եւ կը սկսիմ փառաբանել Քեզ, բայց ոչ այն լեզուով որ գիտեմ: Պենտեկոստէի օրուան պէս ես պիտի սկսիմ խօսիլ: Եւ մինչ կը խօսիմ, ես շնորհակալութիւն կը յայտնեմ Քեզի, Հայր, որ Սուրբ Հոգին պիտի տայ ինծի կարողութիւնը այդ մէկը ընելու:

5. Հիմա փառաբանելու համար ձեռքերդ վեր բարձրացուցած սկսիր փառաբանել Զինք: Փոքր ձայներ հանէ: Կենդանի ջուրի աղբիւրներ պիտի սկսին հոսիլ քեզմէ, մինչ Սուրբ Հոգին կը սկսի ձայնաւոր ներշնչումներ տալ քեզի:

**Գ. Այդ երկնային լեզուին նպատակները հետեւեալներն են.**

1. Փառաբանութիւն

• «Ուրեմն ի՞նչ ընելու եմ: Պիտի աղօթեմ հոգիով, պիտի աղօթեմ միտքով ալ. սաղմոս պիտի երգեմ հոգիով, սաղմոս պիտի երգեմ միտքով ալ» (Ա.Կր 14.15):

2. «Իսկ դո՛ւք, սիրելիներ, շինելով դուք ձեզ՝ ձեր ամենասուրբ հաւատքին վրայ, եւ աղօթելով Սուրբ Հոգիով» (Յդ 1.20):

**ԵԶՐԱԿԱՑՈՒԹԻՒՆ**

Զեր կեանքերը նոյնը պիտի չըլլան երբեք: Մինչ դուք կը փառաբանէք զԱստուած եւ կ'աղօթէք Հոգիով, գերբնական կենդանի ջուրերու գետեր պիտի շարունակեն դուրս հոսիլ ձեզմէ:



## ԽՄԲԱՅԻՆ ՔՆՆԱԲԿՈՒՄ

1. Հիմա ժամանակ տրամադրեցե՛ք աղօթելու համար եւ օգնելու ձեր խումբի այն անդամներուն, որոնք Սուրբ Հոգիին մկրտութիւնը չեն ստացած:
2. Անոնք, որոնք նոր մկրտուեցան Սուրբ Հոգիով պէտք է ժամանակ տրամադրեն իրենց նոր երկնային լեզուով աղօթելու եւ փառաբանելու:
3. Դասընթացի առաջնորդը այս պահուն քանի մը վայրկեան պէտք է տրամադրէ խօսելու համար անոնց հետ, որոնք նոր մկրտուեցան Սուրբ Հոգիով: Անոնց հետ խօսեցէ՛ք այդ պարգելին շարունակ օգտագործման մասին:

## ԻՆՔՆԱՇԽԱՏՈՒԹԻՒՆ

Սերտէ՛ հետեւեալ աստուածաբանական հաստատումները եւ քու բառերովդ գրէ՛ այն նշաններուն մասին, որոնք պէտք է երեւին Սուրբ Հոգիով մկրտուածներուն վրայ:

1. Գրծ 2.1-4
2. Գրծ 8.14-40
3. Գրծ 10.44-46
4. Գրծ 19.2-6
5. Մր 16.17
6. Ա.Կր 14.14

**ԳԵՐԲՆԱԿԱՆ ԿԵԱՆՔ**  
**ԵՐԿՐՈՐԴ ՊԱՀ**  
**Սուրբ Հոգիին Պարգեւները**

**ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆ**

Առաջին դասին մէջ մենք Սուրբ Հոգիին պարգեւը ստացանք եւ սկսանք ուրիշ լեզուներով խօսիլ: Այդպիսով մենք մտաւ գործեցինք գերբնական աշխարհին դարպասէն ներս: Երբ Սուրբ Հոգիին մկրտութիւնը կը ստանաս եւ կը խօսիս նոր լեզուներով, դուն մտաւ կը գործես գերբնական թագաւորութենէն ներս: Այս պահուն ընթացքին մենք յառաջ պիտի անցնինք խօսելու Սուրբ Հոգիին Պարգեւներուն մասին:

**ԴԱՍԻ ՆԱԽԱԳԻԾ**

**I. ՊԱՐԳԵՒՆԵՐՈՒՆ ԿԱՐԵՒՈՐՈՒԹԻՒՆԸ**

- Պօղոս առաքեալը բոլոր հաւատացեալներուն համար շեշտեց Սուրբ Հոգիին պարգեւներուն կարեւորութիւնը երբ գրեց՝ «Հոգեւոր պարգեւներուն մասին չեմ ուզեր որ անգէտ ըլլաք, եղբայրներ» (Ա.Կր 12.1):

**Ա. Ինչ պարգեւներ յայտնաբերուած**

1. Պօղոս առաքեալ սորվեցուց Սուրբ Հոգիին ինչ պարգեւներուն տարբերութիւններուն ինչպէս նաեւ իւրաքանչիւրին գործունէութեան եւ յայտնութիւններուն մասին:
2. «Ուրեմն շնորհները զանազան են՝ բայց նոյն Հոգին է, սպասարկութիւնները զանազան են՝ բայց նոյն Տէրն է, ներգործութիւնները զանազան են՝ բայց նոյն Աստուածն է որ կը ներգործէ ամէն ինչ՝ բոլորին մէջ: Սակայն Հոգիին յայտնաբերումը իւրաքանչիւրին տրուած է՝ բոլորին օգուտին համար: Մէկուն տրուած է իմաստութեամբ խօսելու՝ Հոգիով. ուրիշին՝ գիտութեան խօսելու, նոյն Հոգիով. ուրիշին՝ հաւատք, նոյն Հոգիով. ուրիշին՝ բժշկելու շնորհներ, նոյն Հոգիով. ուրիշին՝ հրաշագործութիւններ, ուրիշին՝ մարգարէութիւն, ուրիշին՝ հոգիներու զատորոշութիւն, ուրիշին՝ զանազան լեզուներու տեսակներ, ուրիշին՝ լեզուներու թարգմանութիւն» (Ա.Կր 12.4-10):

**Բ. Բոլոր հաւատացեալներուն համար**

1. Նկատի առ, որ Պօղոս կը նշէ (Ա.Կր 12.7ին մէջ), թէ այդ շնորհները կը տրուին բոլորին օգուտին համար:
  - ա. Հաւատացեալները Աստուծոյ որոշած չափին համաձայն օգուտ պիտի չճաղեն իրենց կեանքին մէջ բացի եթէ բոլոր շնորհները գործի լծուած ըլլան:
  - բ. Նոյն համարին մէջ Պօղոս նաեւ կը սորվեցնէ, թէ բոլոր ինչ պարգեւներն ալ իւրաքանչիւրին կրնան տրուիլ:
2. Այդ համարին մէջ յստակ է նաեւ, թէ ամէն հաւատացեալ՝ Սուրբ Հոգիին կողմէ գերբնական կարողութիւնը ստանալով, կրնայ եւ պէ՛տք է գործէ Սուրբ Հոգիին առաջնորդութեամբ ինչ պարգեւներուն բոլորին պարագային:

**Գ. Ուսուցումներ՝ հանրային օգտագործման համար**

1. Հաւատացեալներու հաւանքներուն ընթացքին իւրաքանչիւր հաւատացեալ պէ՛տք է դերակատարութիւն ունենայ պարգեւներուն կիրարկման մէջ:
  - Այնպէս ինչպէս մարդկային մարմինին իւրաքանչիւր բաժինը կը գործէ ուղեղէն ստացած նշաններով, իւրաքանչիւր հաւատացեալ պէ՛տք է պարգեւները կիրարկէ Սուրբ Հոգիին առաջնորդութեամբ:

2. «Այս ամէնը՝ միեւնոյն Հոգին կը ներգործէ, եւ իւրաքանչիւրին կը բաժնէ զատ-զատ՝ ինչպէս որ ինք կը փափաքէ: Արդարեւ՝ ինչպէս մարմինը մէկ է բայց շատ անդամներ ունի, եւ այն մարմինին բոլոր անդամները՝ թէպէտ շատ՝ մէկ մարմին են. նոյնպէս ալ Քրիստոս» (Ա.Կր 12.11-12):
3. «Աստուած ալ վկայեց նշաններով եւ սքանչելիքներով, ու զանազան հրաշքներով եւ Սուրբ Հոգիին բաշխումներով՝ իր կամօքին համաձայն» (Եբր 2.4):
4. Կարելոյ է որ սորվինք ունկնդրել Սուրբ Հոգիին:

## II. ՊԱՐԳԵԻՆՆԵՐՈՒՆ ՄՂՈՒՄՆ ՈՒ ԿԻՐԱՐԿԻՄՆԵՐ

### Ա. Եկեղեցիին շինութեան համար

1. Մենք պէտք է նախանձախնայիք ըլլանք եւ լրջօրէն փափաքինք, որ մեզմէ իւրաքանչիւրը գերազանց ըլլայ այդ բոլոր պարգեւներուն կիրարկման մէջ, ոչ թէ լաւ երեսելու համար, այլ եւ՝ ամբողջ Եկեղեցիին շինութեան համար:
2. «Նոյնպէս ալ դուք, բանի նախանձախնայիք էք հոգեւոր պարգեւներու, ջանացէ՛ք գերազանց ըլլալ՝ եկեղեցիին շինութեան համար» (Ա.Կր 14.12):
3. Յիսուս ըսաւ, որ պիտի կառուցէ Իր Եկեղեցին:
  - ա. Անոր Եկեղեցին կը շինուի կամ կը կառուցուի երբ այդ պարգեւները կիրարկման մէջ են:
  - բ. Փոխանակ անգէտ ըլլանք այդ պարգեւներուն նկատմամբ, մենք պէտք է սորվինք, փորձարկենք եւ մեր անձերը մարգեւն զանոնք կիրարկելու մէջ, մինչեւ որ հասնինք իւրաքանչիւր պարգեւ կիրարկելու գերազանց մակարդակին:
4. Մենք պէտք է լրջօրէն փափաքող ըլլանք այդ պարգեւներուն գերազանց կիրարկման մեր կեանքներուն մէջ:
  - Երբ պէտք մը գոյութիւն ունի մարդոց կեանքերէն ներս, կամ Քրիստոսի մարմինին մէջ, մենք պէտք է կիրարկենք այդ կացութեան համար լաւագոյն պարգեւը, որ ամէնէն ազդու կերպով կը բաւարարէ այդ պէտքը:
5. «Քանի ձեզմէ իւրաքանչիւրը ստացած է շնորհ մը, սպասարկեցէ՛ք զայն իրարու՝ Աստուծոյ բազմազան շնորհքին բարի տնտեսներուն պէս» (Ա.Պտ 4.10):

### Բ. Լրջօրէն փափաքեցէ՛ք այդ պարգեւները:

1. «Բայց դուք նախանձախնայի՛ր եղէք լաւագոյն շնորհներուն, ու ես տակաւին ցոյց պիտի տամ ձեզի գերազանց համբայ մը» (Ա.Կր 12.31):
2. Աւելի գերազանց ձեւը այդ պարգեւներուն կիրարկման Ա.Կր 13ին մէջ նկարագրուած հաւատովը, յոյսովը եւ սիրովը է:
  - ա. Պարգեւները հաւատով է, որ կը կիրարկուին՝ նոր, թարմ յոյս բերելով Եկեղեցիին եւ ուրիշ մարդոց կեանքներուն մէջ:
  - բ. Մենք միշտ պէտք է մղուած ըլլանք ուրիշներու նկատմամբ Աստուծոյ սէրէն եւ ոչ թէ մեր անձնական հպարտութենէն կամ երեսելու փափաքէն:

### Գ. Արժարձեցէ՛ք պարգեւները:

1. «Ուստի կը վերջիւնեցնենք քեզի՝ որ արժարձեւ Աստուծոյ շնորհը, որ տրուեցաւ քեզի՝ երբ ձեռնադրեցի քեզ» (Բ.Տմ 1.6):
  - ա. «Որովհետեւ կը տեսնանք տեսնել ձեզ՝ որ փոխանցենք ձեզի հոգեւոր շնորհ մը, որպէսզի ամրանաք» (Հո 1.11):
  - բ. Տիմոթէոսին կեանքին մէջ այդ շնորհներուն կիրարկումը հաղորդուեցաւ եւ սկիզբ առաւ Պողոսի կողմէ ձեռք դրուելով: Ասկէ ետք Տիմոթէոսին պարտականութիւնն էր զբոսել այդ պարգեւները եւ անոնց կրակը վառ պահել իր կեանքին եւ առաքելութեան մէջ:
  - գ. Այդ մէկը ընելով մենք եւս Հոգիով ապրած եւ քայլած պիտի ըլլանք (Հո 1.11):

2. «Եթէ Հոգիով կ'ապրինք՝ նաեւ ընթանա՛նք Հոգիին համաձայն: Սնափառ չըլլա՛նք՝ զիրար գրգռելով եւ իրարու նախանձելով» (Գղ 5.25):

### III. ՊԱՐԳԵԻՆԵՐՈՒՆ ԵՐԵՔ ԽՈՒՄԲԵՐԸ

- Սուրբ Հոգիին ինը պարգևները առաքելութեան համար կարեւոր գործիքներ են ամէն հաւատացեալի համար: Մեր իւրաքանչիւրին կեանքէն ներս անոնց գործերը ու գործելաձեւը աւելի լաւ հասկնալու համար, մենք զանոնք բաժնած ենք երեք խումբերու, իւրաքանչիւրին մէջ՝ երեք պարգեւ: Այդ երեք խումբերն են.

Ա. Զայնային ներքնչման (խօսքով արտայայտուող) պարգևներ.

1. Զայնային ներքնչման (խօսքով արտայայտուող) պարգևները դրսեւորումներն են Սուրբ Հոգիին կողմէ մեզի ուղղուած կամ մեր միջոցաւ կատարուող գերբնական խօսակցութեան: Այդ ընթացքին հաւատացեալները կը զօրանան, կը քաջալերուին եւ կը մխիթարուին, բայց երբեք չեն դատապարտուիր:

2. Զայնային ներքնչման երեք պարգևներն են.

ա. Լեզուները

բ. Լեզուներու թարգմանութիւնը

գ. Մարգարէութիւնը

Բ. Յայտնութեան պարգևները (լսողութեամբ)

1. Յայտնութեան պարգևները կը դրսեւորուին մինչ Աստուած գերբնական ձեւերով հոգիներու ինքնութիւնը, բնոյթը եւ գործունէութիւնը կը յայտնաբերէ կամ երբ Ան գերբնական ձեւերով գիտութիւն կամ իմաստութիւն կը յայտնէ Իր ժողովուրդին: Այդ յայտնութիւնը մեր միտքին մէջ կը պայծառանայ մեր հոգիին միջոցաւ մտածումի մը, գաղափարի մը, զգացումի մը, երազի մը կամ տեսիլի մը ձեւով:

2. Յայտնութեան երեք պարգևներն են.

ա. Հոգիներ զանազանելու պարգևը

բ. Գիտութեան խօսքը

գ. Իմաստութեան խօսքը

Գ. Զօրութեան պարգևները (կատարելով)

1. Զօրութեան պարգևները կը դրսեւորուին երբ Աստուած Իր գերբնական հաւատքը կամ ուժը կ'արձակէ, որպէսզի անիկա մեր մէջ աշխատի կամ մեր մէջէն հոսի:

2. Զօրութեան երեք պարգևներն են.

ա. Հաւատքի պարգևը

բ. Բժշկութեան պարգևները

գ. Հրաշագործութեան պարգևը

### IV. ԼԵԶՈՒՆԵՐԸ. ՄԱՐԴՆ Է, ՈՐ ԱՍՏՈՒԾՈՅ ԿԸ ԽՕՄԻ ԿԱՄ ԱՍՏՈՒԱԾ Է, ՈՐ ՄԱՐԴՆՈՒՆ ԿԸ ԽՕՄԻ

- Աստուածաբաններն մէջ զանազանութիւն մը կը դրուի լեզուներուն, որ բոլորին տրուեցաւ երբ Սուրբ Հոգիին մկրտութիւնը ստացան եւ լեզուներու պարգևին միջեւ, որուն միջոցաւ գերբնական ձեւով պատգամ մը կը տրուի հաւատացեալին: Մէկը գԱստուած փառաբանելու կամ Աստուծոյ աղօթելու լեզու մըն է իսկ միւսը Աստուծոյ կողմէ մարդուն տրուած պատգամ մըն է: Պենտեկոստէի Օրը բոլորը Սուրբ Հոգիին ներգործութեան տակ էին եւ սկսան ուրիշ լեզուներով խօսիլ այնպէս ինչպէս Հոգին խօսիլ կու տար (Գրծ 2.4):

Ա. Հրեշտակներու լեզու կամ մարդկային լեզու

1. Լեզուներու այդ գերբնական արտայայտութիւնը կրնայ երկնային լեզու մը՝ հրեշտակներու լեզուներ ըլլալ (Ա.Կր 13.1) կամ կրնայ գերբնական կերպով խօսուող մարդկային լեզու մը ըլլալ, որ անձանօր է խօսողին, բայց կրնայ հասկնալի ըլլալ ուրիշ լսողի մը:

2. «Երբ այս ձայնը եղաւ, բազմութիւնը համախմբուեցաւ ու շփոթեցաւ, որովհետեւ կը լսէին թէ անոնք կը խօսէին իրենցմէ իւրաքանչիւրին սեփական բարբառով: Բոլորն ալ զմայլած էին եւ կը զարմանային՝ իրարու

ըսելով. «Ահա՛ ասոնք բոլորն ալ՝ որ կը խօսին, միթէ Գալիլիացի չե՞ն: Ուրեմն ի՞նչպէս կը լսենք՝ մեր իւրաքանչիւրին սեփական բարբառով, այն երկրին՝ որուն մէջ ծնած ենք՝ ... կը լսենք թէ անոնք կը խօսին Աստուծոյ մեծամեծ գործերուն մասին՝ մեր լեզուներով» (Գրծ 2.6-8, 11):

#### Բ. Լեզուներ. Փառաբանութիւն Աստուծոյ

1. Բոլոր Հոգիով լեցուած հաւատացեալները, որոնք ունեցած են լեզուներ խօսելու պարգեւը՝ իբրեւ ապացոյց Սուրբ Հոգիին մկրտութիւնը ստացած ըլլալուն, պէտք է օրական շարունակէն խօսիլ կամ երգել Աստուծոյ փառաբանութեան այդ գերբնական լեզուով:

ա. Այդ ընթացքին անոնք խորհուրդներ կը պատմեն իրենց հոգիներով:

բ. «Որովհետեւ ա՛ն որ կը խօսի անձանօր լեզուով, կը խօսի ո՛չ թէ մարդոց՝ հապա Աստուծոյ, քանի որ ո՛չ մէկը կը հասկնայ զինք. սակայն ան խորհուրդներ կ'արտայայտէ հոգիով» (Ա.Կր 14.2):

2. Մենք լեզուներ խօսելով կը կերտուինք: Պօղոս կ'ըսէ՝ «Ա՛ն որ անձանօր լեզուով կը խօսի՝ ինքզինք կը շինէ...» (Ա.Կր 14.4):

#### Գ. Պօղոս կը շեշտէ լեզուներով խօսելուն կարեւորութիւնը:

1. Պօղոս գրեց. «Շնորհակալ եմ Աստուծմէ, որ ձեր բոլորէն աւելի լեզուներ կը խօսիմ...» (Ա.Կր 14.18):

2. Պօղոս նաեւ գրեց, թէ՛ «Կ'ուզեմ որ դուք բոլորդ լեզուներ խօսիք...» (Ա.Կր 14.5):

3. Ա.Կր 14.39-ին մէջ Պօղոս կ'ըսէ՝ «...մի՛ արգիլէք լեզուներ խօսիլն ալ»:

#### Դ. Լեզուները. Նշան Մը՝ Անհաւատներուն

1. Լեզուները այն նշաններէն մէկն է, որոնց մասին Յիսուս խօսեցաւ: «Սա՛ նշանները պիտի հետեւին անոնց՝ որ կը հաւատան. – դեւեր՝ դուրս պիտի հանեն իմ անունովս, նո՛ր լեզուներ պիտի խօսին» (Մր 16.17):

• Մինչ հաւատացեալներ կը ֆարագեն կամ կը բաժնեկցին Աւետարանը, լեզուները գերբնական նշաններէն մէկն են, որ պիտի հաստատեն Խօսքին նշանաբանները անհաւատներուն համար:

2. Մր 16.20-ը վերջ կը գտնէ հետեւեալ բառերով՝ «Իսկ անոնք գացին եւ կը ֆարագէին ամէնուրեք: Տէրը անոնց գործակից էր, ու կը հաստատէր խօսքը՝ ընկերացոյ նշաններով»:

3. Երբ լեզուներու գերբնական նշանը յայտնուեցաւ Պենտեկոստէի օրը, երեք հազար հոգի աւելցաւ հաւատացեալներուն թիւին վրայ:

4. Լեզուները դէպի Սուրբ Հոգիին գերբնական պարգեւները առաջնորդող դուռն են:

## ԽՄԲԱՅԻՆ ՔՆՆԱՐԿՈՒՄ

1. Բաժնեկցեցէ՛ք ձեր տեսակէտները այս դասին հետեւեալ հաստատումին շուրջ թէ՛ «բոլոր ինը պարգեւներն ալ կը տրուին իւրաքանչիւրին (իւրաքանչիւր հաւատացեալի)», Ա.Կր 12.29-30-ին լոյսին տակ:

2. Ի՞նչ կը նշանակէ կիրարկել լաւագոյն պարգեւը:

3. Ի՞նչ է «աւելի գերագանց ձեւը» կիրարկելու Սուրբ Հոգիին պարգեւները:

## ԻՆՔՆԱՇԽԱՏՈՒԹԻՒՆ

1. Կարդա՛ Հո 1.11-ը եւ Բ.Տմ 1.6-ը: Ի՞նչպէս կրնաս արծարծել Աստուծոյ պարգեւը մէջդ:

2. Գրէ՛ քու սեփական սահմանումդ Հոգիին ինը պարգեւներէն իւրաքանչիւրին մասին:

ա. Լեզուներ

բ. Լեզուներու թագմանութիւն

գ. Մարգարէութիւն

դ. Հոգիներու զանազանութիւն

ե. Գիտության խօսք

զ. Իմաստության խօսք

է. Հաւատի պարգեւներ

ը. Բժեկության պարգեւներ

թ. Հրաշագործութիւն

**ԳԵՐԲՆԱԿԱՆ ԿԵԱՆՔ**  
**ԵՐՐՈՐԴ ՊԱՀ**  
**Ջայնային Պարգեւները**

**ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆ**

Այս պահուն ընթացքին պիտի ստվինք ինչպէս կիրարկել Սուրբ Հոգիին ձայնային պարգեւները: Անոնք են լեզուներու պարգեւը, լեզուներու թարգմանութեան պարգեւը եւ մարգարէութիւնը: Լեզուները Հոգիով լեցուած հաւատացեալները կ'օժտեն գերբնական աղօթքի լեզուով մը:

**ԴԱՍԻ ՆԱԽԱԳԻԾ**

**I. ԼԵԶՈՒՆԵՐ**

**Ա. Գերբնական լեզու մը աղօթքի կամ մարգարէութեան**

1. Պօղոս գրեց՝ «Ուստի ա՛ն որ կը խօսի անծանօթ լեզուով, թող աղօթէ՝ որ կարենայ թարգմանել: Քանի որ երբ ես աղօթեմ անծանօթ լեզուով, հոգիս կ'աղօթէ, բայց միտքս անպտուղ է: Ուրեմն ի՞նչ ընելու եմ: Պիտի աղօթեմ հոգիով, պիտի աղօթեմ միտքով ալ. սաղմոս պիտի երգեմ հոգիով, սաղմոս պիտի երգեմ միտքով ալ» (Ա.Կր 14.13-15):
2. Երբ աղօթեմ լեզուով մը, որ Հոգիով է, ես մտքով կը գործեմ աղօթքի հետաքրքրական, ուժեղ եւ անսահման թագաւորութիւն մը:
  - ա. Իմ աղօթքս արդէն սահմանափակ չէ՝ իմ պակասաւոր հասկացողութեանս (միտքիս) պատճառով, որ անպտուղ է:
  - բ. Երբ աղօթեմ հոգիով, Սուրբ Հոգիին իմ հոգիս միջոցաւ կ'աղօթէ՝ կատարեալ համաձայնութեամբ Աստուծոյ կամօքին, գիտութեան, հասկացողութեան եւ իմաստութեան հետ:

**Բ. Սուրբ Հոգիին կ'օգնէ մեզի:**

1. «Նոյնպէս Հոգիին ալ կ'օգնէ մեր տկարութիւններուն մէջ. քանի որ չենք գիտեր ի՛նչ բանի համար աղօթելու եմք՝ ինչպէս պէտք է. բայց Հոգիին ի՛նչ կը բարեխօսէ մեզի համար՝ անբարբառ հառաչանքներով: Եւ ա՛ն որ կը գննէ սիրտերը, գիտէ Հոգիին ի՛նչ մտածելը, քանի որ կը բարեխօսէ սուրբերուն համար Աստուծոյ կամօքին համաձայն» (Հն 8.26-27):
2. Երբ Հոգիով կ'աղօթենք, մենք վստահ կ'ըլլանք, որ սխալ բաներ չենք խնդրեր: Յակոբոս կը գրէ. «Կը խնդրէ՛ սակայն չէ՛ք ստանար, որովհետեւ կը խնդրէ՛ք չարամտօրէն...» (Յկ 4.3):
3. Յոնաթան երբ հոգիով կ'աղօթենք, լեզուներու թարգմանութեան պարգեւը կը սկսի աշխատիլ եւ կը սկսինք աղօթել մեր «միտք»ին մէջ կատարուող գերբնական յայտնութեամբ, մեր սեփական լեզուով (Ա.Կր 14.13-15):
4. Երբ լեզուներով աղօթենք, մենք այլեւս չենք աղօթեր մեր անպտուղ միտքով կամ կարգ մը հարցերու մասին՝ վախով:
  - Մենք Հոգիին սուրբ կ'անենք, որ Աստուծոյ Խօսքն է, եւ միշտ կ'աղօթենք՝ մեր բոլոր աղօթքներն ու աղերսանքները Հոգիով ընելով (Եփ 6.17-18):

**Գ. Աստուած կը խօսի լեզուներու պարգեւով (մարգարէութիւն):**

1. Ջայնային պարգեւները միշտ պիտի տան գորութիւն, քաջալերանք եւ հազիստ, ոչ՝ դատապարտութիւն:

2. «Իսկ ան որ կը մարգարէանայ, կը խօսի մարդո՛ց՝ շինութիւն, յորպոք եւ սփոփանք տալու» (Ա.Կր 14.3):

Դ. Մարգարէութիւնները պիտք է քննուին:

1. Այս պարգելին միջոցաւ եկող պատգամները ենթակայ են մարդկային սխալական բնոյթի վրիպումներուն, եւ երբեք Աստուածաւանդին իշխանութեան համազօր պէտք չէ սեպուին:
  - Անոնք լսողներուն կողմէ պէտք է քննուին, գիտնալու համար եթէ անոնք ճիշդ են եւ եթէ իսկապէս Աստուծոյ կողմէ տրուած պատգամներ են:
2. «Մարգարէները թող խօսին՝ երկու կամ երեք հոգի, ու միւսները վճռեն» (Ա.Կր 14.29):

Ե. Լեզուներու պարգելին սահմանումը

1. Լեզուներու պարգելը գերբնական ձայնային արտայայտութիւն մըն է՝ Սուրբ Հոգիին կողմէ ներշնչման մը իբրեւ արդիւնք, մեր բնական ձայնին գործածութեամբ:
2. Աստուած հաւատացեալներուն կը խօսի այս պարգելին միջոցաւ, երբ անիկա թարգմանութեան պարգելին հետ կը կիրարկուի:
3. Այս պարգելը կիրարկող հաւատացեալը չի հասկնար իր բերանէն հնչող այդ լեզուն:

Զ. Լեզուներու թարգմանութիւն

1. Լեզուներու պարգելով Աստուծոյ ուղղուած փառաբանական խօսքերը պէտք չունին թարգմանուելու: Սակայն երբ լեզուներու պարգելին միջոցաւ Աստուած կը խօսի հաւատացեալներուն, այդ խօսքերը պէտք է թարգմանուին կա՛մ լեզուներու պարգելով պատգամը տուողին կամ ալ ուրիշի մը կողմէ:
2. «Ուստի ան որ կը խօսի անձանօր լեզուով, թող աղօթէ՝ որ կարենայ թարգմանել (Ա.Կր 14.13):
3. Լեզուներու թարգմանութեան պարգելը ուրիշ լեզուով տրուած պատգամին ձայնային արտայայտութեան բացատրութեան կամ իմաստին գերբնական ծանուցումն է՝ Հոգիին միջոցաւ, լսողին հասկցած լեզուով:
  - ա. Անիկա մտային գործողութիւն մը կամ հասկացողութիւն մը չէ:
  - բ. Անիկա կը տրուի Աստուծոյ Հոգիին կողմէ:
4. Լեզուներու թարգմանութիւնը կրնայ տրուիլ հաւատացեալի մը, որուն Աստուած կ՛ուզէ այդ պահուն տալ այդ պարգելը՝ գաղափարի մը, տեսիլքի մը կամ պարզապէս սկզբնական բառերու միջոցաւ:
  - Մինչ մենք հաւատով կը սկսինք խօսիլ, Աստուած մեր բերաններուն մէջ յաւելեալ բառեր պիտի դնէ մինչեւ որ լեզուներով տրուած պատգամին ամբողջական թարգմանութիւնը մատակարարուի:

## II. ԵԿԵՂԵՑԻԿՆ ԵՆՐՄ ԶԱՅՆԱՅԻՆ ՊԱՐԳԵԼՆԵՐՈՒ ԿԻՐԱՐԿՄԱՆ ՈՒՍՈՒՑՈՒՄՆԵՐ

Ա. Զայնային պարգելներուն պատմականը

1. Կորնթոսի եկեղեցիին մէջ շատ կար ձայնային պարգելներուն կիրարկման կանոնին եւ ձեւին վերաբերեալ:
  - ա. Պօղոսին գրութիւններէն յայտնի է, թէ անոնցմէ շատեր միեւնոյն ատեն լեզուներով կը խօսէին՝ առանց ժամանակ տալու լեզուներու թարգմանութեան պարգելին կիրարկման:
  - բ. Այդ մէկը շատ յառաջացուցած էր, ինչ որ մղեց Պօղոսը, որ յստակ ուսուցումներ տայ եկեղեցական ծառայութեան ընթացքին ձայնային պարգելներուն գործածութեան վերաբերեալ:
2. «Եթէ մէկը խօսի անձանօր լեզուով, երկու կամ ամէնէն շատը՝ երեք հոգի թող ըլլան, եւ խօսին կարգով. մէկն ալ թող թարգմանէ» (Ա.Կր 14.27):
3. «...սակայն կը նախընտրեմ եկեղեցիին մէջ հինգ խօսք ըսել միտքովս, որպէսզի ուրիշներուն ալ սորվեցնեմ, քան բազում խօսքեր՝ անձանօր լեզուով» (Ա.Կր 14.19, 28):

Բ. Պէտք է թարգմանութիւն ըլլայ:

1. Եթէ պատգամ մը տրուի լեզուներու պարգևով եւ ջրարգանուի, այդ մէկը շփոթ պիտի ստեղծէ:
2. Եթէ ոչ ոք պիտի կիրարկէ լեզուներու թարգմանութեան պարգևը, պատգամը պէտք է տրուի իբրև մարգարէութիւն մը՝ հասկնալի լեզուով մը եւ ոչ լեզուներով:
3. Այդ ձևով մարգարէացողը աւելի մեծ արժէք պիտի ունենայ Եկեղեցիին համար:
4. «Կ'ուզեմ որ դուք բոլորդ լեզուներ խօսիք, մա՛նաւանդ՝ մարգարէանաք. որովհետեւ ա՛ն որ կը մարգարէանայ, աւելի մեծ է քան ա՛ն որ լեզուներ կը խօսի, բացի եթէ ինք թարգմանէ՝ որպէսզի Եկեղեցին շինութիւն ստանայ» (Ա.Կր 14.5):
  - ա. Այնպէս կը թուի, թէ Կորնթոսի մէջ շատեր Եկեղեցական ծառայութեան ընթացքին երկար ժամանակ լեզուներով կը փառաբանէին Աստուած:
  - բ. Պօղոս անոնց կը բացատրէր, թէ աւելի լաւ էր որ լեզուներով Աստուած փառաբանէին առանձին, բայց երբ կը մէկտեղուէին եւ Աստուած կ'ուզէր խօսիլ իրենց հետ լեզուներու պարգևին միջոցաւ, անոնք պէտք է այդ պատգամները լեզուներով խօսէին եւ ապա առիթ տային, որ Աստուած անոնց թարգմանութիւնը տար նսեւ: Կամ, ինչ որ շատ աւելի արժէքաւոր պիտի ըլլար իրենց համար, պարգապէս պատգամը փոխանցէին իրենց բնական լեզուով՝ մարգարէութեան միջոցաւ:

### III. ՄԱՐԳԱՐԷՆՈՒԹԵԱՆ ՊԱՐԳԵԻՆ

#### Ա. Աստուածաբանական հիմք

1. «Առկէ ետք՝ Իմ Հոգիս ամէն մարմինի վրայ պիտի թափեմ. ձեր որդիներն ու աղջիկները պիտի մարգարէանան...» (Յվլ 2.28):
2. «Այն ատեն Տիրոջ Հոգին ինչ պիտի համակէ, անոնց հետ մարգարէութիւն պիտի ընես եւ ուրի՛շ մարդ մը պիտի դառնաս» (Ա.Թգ 10.6):

#### Բ. Մարգարէութեան սահմանումը

1. Մարգարէութեան պարգևը ներշնչման տակ ծանօթ լեզուով մը ինքնավստի, ձայնային գերբնական արտայայտութիւն մըն է, որ կը զօրացնէ, կը քաջալերէ եւ կը մխիթարէ Յիսուսի մարմինը:
2. Անհիկա Աստուծմէ եկած ուղղակի պատգամ մըն է, որ պիտի շինէ անձ մը կամ ամբողջ Եկեղեցին:
3. Մարգարէութեան միջոցաւ մենք այդ ճիշդին վերաբերեալ Աստուծոյ գիտութեան միայն մէկ մասը կ'արտայայտենք եւ ոչ ամբողջը (Ա.Կր 13.9):

#### Գ. Մարգարէանալու փափաքը

- Պօղոս գրեց. «Սիրո՛յ հետամուտ եղէք, ու նախանձախնդի՛ր եղէք հոգեւոր պարգևներու, մա՛նաւանդ՝ մարգարէանալու...Կ'ուզեմ, որ դուք բոլորդ լեզուներ խօսիք, մանաւանդ՝ մարգարէանաք. Որովհետեւ ա՛ն որ կը մարգարէանայ, աւելի մեծ է քան ա՛ն որ լեզուներ կը խօսի, բացի եթէ ինք թարգմանէ՝ որպէսզի Եկեղեցին շինութիւն ստանայ...Հետեւաբար, եղբայրնե՛ր, նախանձախնդի՛ր եղէք մարգարէանալու, ու մի՛ արգիլէք լեզուներ խօսիլն ալ» (Ա.Կր 14.1, 5, 39):

#### Դ. Մարգարէութիւնը պէտք է քննուի

- «Մարգարէները թող խօսին՝ երկու կամ երեք հոգի, ու միւսները վնոեն: Իսկ եթէ ուրիշ մը՝ որ նստած է՝ բան մը յայտնուի, առաջինը թող լռէ: Որովհետեւ բոլորդ ալ կրանք մէկ առ մէկ մարգարէանալ, որպէսզի բոլարն ալ սորվին, եւ բոլորն ալ մխիթարուին: Եւ մարգարէներուն հոգիները մարգարէներուն կը հպատակին» (Ա.Կր 14.29-32):

### IV. ԵՕԹԸ ՓՈՐՁԵՐ՝ ՄԱՐԳԱՐԷՆՈՒԹԻՒՆ ՄԸ ՔՆՆԵՆՈՒ

Ա. Արդեօք անհիկա կը համապատասխանէ՞ Աստուածաբանական:

- «Բայց նայնիսկ եթէ մենք, կամ երկիրքէն հրեշտակ մը, քարոզէ ձեզի ուրիշ որեւէ աւետարան՝ քան զայն որ մենք քարոզեցինք ձեզի, նգովեա՛լ ըլլայ» (Գղ 1.8):

Բ. Ի՞նչ են պտուղները զայն մատակարարողին կեանքին մէջ:

- «Զգուշաց՛էք սուտ մարգարէներէն, որոնք կու գան ձեզի ոչխարի հանդերձներով, բայց ներսէն՝ յափշտակող գայլեր են: Իրենց պտուղէ՛ն պիտի ճանչնաք զանոնք: Միթէ վաւերէն կը քաղէ՞ն խաղող, կամ տատասկէն՝ թուզ» (Մտ 7.15-16):

Գ. Մարգարէութիւնը Աստուած կը փառաւորէ՞:

1. «Իսկ երբ ինք՝ Ճշմարտութեան Հոգին գայ, ամբողջ ճշմարտութեան պիտի առաջնորդէ ձեզ ... Ինք պիտի փառաւորէ զիս, որովհետեւ պիտի ստանայ իմինէս ու հաղորդէ ձեզի» (Յե 16.13-14):
2. «... (որովհետեւ Յիսուսի վկայութիւնը մարգարէութեան հոգին է)» (Յյտ 19.10):

Դ. Արդեօք իրականացա՞ւ անիկա:

- «Եթէ սիրտիդ մէջ ըսես. “Ի՞նչպէս գիտնանք թէ այդ խօսքը Տէրը չէ ըսեր”, երբ մարգարէ մը Տիրոջ անունով խօսի բայց այդ բանը չպատահի, ո՛չ ալ իրագործուի, այդ խօսքն է որ Տէրը չէ ըսեր. մարգարէն յանդգնութեամբ ըսեր է զայն ...» (Բ.Օր 18.21-22):

Ե. Արդեօք անիկա կ'առաջնորդէ՞ դէպի Աստուած կամ կը հեռացնէ Անկէ:

- «Եթէ ձեր մէջէն մարգարէ մը կամ երագատես մը ելլէ, ձեզի նշան մը կամ հրաժար մը տայ, եւ նշանը կամ հրաժարը իրագործուի, որուն մասին ձեզի խօսած էր՝ երբ կ'ըսէր. “Հետեւ ինք ուրիշ աստուածներու - որ ճանչցած չէք - ու զանոնք պաշտենք”, այդ մարգարէին կամ երագատեսին խօսքը մտիկ մի՛ ընէք...» (Բ.Օր 13.1-3):

Զ. Ազատագրութի՞ւն կը բերէ, թէ կապանք:

- «Քանի որ դուք չստացաք ստրկութեան հոգին՝ դարձեալ վախճալու համար ...» (Հն 8.15):

Է. Ի՞նչ է Հոգիին տուած ներքին վկայութիւնը:

1. «Սակայն դուք օծութիւն ունիք Սուրբէն, ու գիտէք ամէն բան» (Ա.Յե 2.20):
2. Եթէ պատգամը Աստուծմէ է, ապա Հոգիէն եկող ներքին վկայութիւն մը պիտի ըլլայ:
  - ա. Եթէ պատգամը չի հաստատեր այն ինչ որ Աստուած արդէն կը խօսէր քու հոգիիդ, նախնայն գործի լծուիլդ սպասէ մինչեւ որ այդ վաւերացումը գայ:
  - բ. Մի արտօսեր, որ քու հոգեւոր առաջնորդներուդ անձանօթ անձ մը մարգարէանայ քեզի համար տուանց ներկայութեանը առաջնորդի մը, որ կրնայ քննել այդ մարգարէութիւնը:

## ԵԶՐԱԿԱՑՈՒԹԻՒՆ

Ա. Մարգարէութեան մը պարագային.

1. Սպասէ՛ մինչեւ վստահ ըլլաս, որ Աստուծմէ էր լսածդ:
2. Սպասէ՛ մարգարէութիւնը փոխանցելու Աստուծոյ ժամանակին:
3. Սպասէ՛ մինչեւ որ հոգեւոր առաջնորդ մը քննէ մարգարէութիւնը:
4. Մարգարէութիւնը կատարէ՛ բնական ձայնով, այժմէական լեզուով մը:
5. Խուսափէ՛ զգացական ծայրայեղ արտայայտութիւններէ եւ ջղային կրկնութիւններէ:
6. «Եւ մարգարէներուն հոգիները մարգարէներուն կը հպատակին» (Ա.Կր 14.32):

Բ. Շինութիւն, յորդորել եւ մխիթարել

1. Ամէնէն կարեւորը՝ մարգարէութիւնը ընդունել միայն եթէ կը վկայէ քու հոգիիդ:
2. Յիշէ՛ Պօղոսին խօսքերը՝ «Իսկ ա՛ն որ կը մարգարէանայ, կը խօսի մարդո՛ց՝ շինութիւն, յորդոր եւ սփտփանք տալու» (Ա.Կր 14.3):

Գ. Ի՛նչ սեանչելի է, որ Աստուած ներկայիս Իր ժողովուրդին տակաւին կը խօսի Սուրբ Հոգիին ձայնային պարգեւներուն միջոցաւ:

## ԽՄԲԱՅԻՆ ՔՆՆԱՐԿՈՒՄ

1. Փոքր խումբեր կազմեցէ՛ք եւ լեզուներ խօսելով Հոգիին ձայնային պարգեւները արծարծեցէ՛ք. առիթ տուէ՛ք, որ լեզուները թարգմանուին կա՛մ գանոնք խօսող անձին կողմէ կամ ալ խումբին մէջ ուրիշի մը կողմէ:
2. Ունէ՛ մէկը, որ մարգարէական պատգամ ունի, պէտք է քաջալերէ՛ք որ տայ ձեր փոքր խումբերուն մէջ:

## ԻՆՔՆԱՇԽԱՏՈՒԹԻՒՆ

1. Նշէ՛ հաւատացեալներու հաւաքի մը ընթացքին կատարուող մարգարէութեան երեք նպատակները, ըստ Ա.Կր 14.3ին:
2. Ո՞վ պէտք է որոշէ, թէ մարգարէական պատգամախօսութիւն մը Աստուծո՞ւն է թէ ոչ:
3. Ըստ հետեւեալ աստուածաճշտական համարներուն, ի՞նչ ուսուցումներ կը տրուին եկեղեցական հաւաքի մը ընթացքին ձայնային պարգեւներուն կիրարկման համար:  
ա. Ա.Կր 14.27  
բ. Ա.Կր 14.19, 28  
գ. Ա.Կր 14.5
4. Ըստ Ա.Կր 14.1, 5, 39ին, ո՞վ պէտք է լեզուներով խօսի, թարգմանէ եւ մարգարէանայ:
5. Քու բառերովդ գրէ՛ այն ուղեցոյցը, որուն պէտք է հետեւիս, եթէ պիտի մարգարէանաս:

ԳԵՐԲՆԱԿԱՆ ԿԵԱՆՔ  
ԶՈՐՐՈՐԴ ՊԱՀ  
Յայտնութեան Պարգեւները

ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆ

Այս գրքին մէջ պիտի ստորագրուի յայտնութեան պարգեւներուն մասին: Աստուած կը խօսի եւ բաներ կը յայտնէ Իր ժողովուրդին այսօր:

Աստուած միշտ յայտնութիւններ կը կատարէ Իր ժողովուրդին՝ Սուրբ Հոգիին յայտնութեան երեք պարգեւներով: Հոգիներ զանազանելու պարգեւը, իմաստութեան խօսքը եւ գիտութեան խօսքը քարոզչութեան կարեւոր գործիքներ են, որոնք պէտք են բոլոր հաւատացեալներուն իրենց աօրեայ կեանքին մէջ:

ԴԱՍԻ ՆԱԽԱԳԻԾ

I. ՀՈԳԻՆԵՐՈՒ ԶԱՆԱԶԱՆՈՒԹԻՒՆ

Ա. Խուսափել խաբկանքէ

- Այս մէկը հաւանաբար ամէնէն պահանջուած բայց անտեսուածն է Սուրբ Հոգիին պարգեւներէն:
- Յիսուս զգուշացուց՝ «Որովհետեւ սուս Քրիստոսներ ու սուս մարգարէներ պիտի ելլեն, եւ ցոյց պիտի տան մեծ նշաններ ու սխալ շեշտներ, որպէսզի՝ եթէ կարելի ըլլայ՝ մոլորեցնեն ընտրեալներն իսկ» (Մտ 24.24):
- Մենք պիտի չխաբուինք եթէ ստորագրուի կիրարկել Սուրբ Հոգիին այս կարեւոր պարգեւը:
  - ա. «Զանազանել» բառը հոս յաճախ կը շփոթուի «բնորոշել» բառին հետ, եւ այս պարգեւը ոմանց կողմէ սխալ կերպով կը կոչուի «բնորոշելու պարգեւ»:
  - բ. Մարդկային բնորոշումը մտային աշխատանք մըն է կամ կը վերաբերի մեր ենթագիտակիցին:
  - գ. Ի հակասութիւն մարդկային այդ կարողութեան, այս պարգեւը գերբնական պարգեւ մըն է, որ կարելի է ստանալ մեր հոգիներուն ընդմէջէն՝ Սուրբ Հոգիին յայտնութեամբ:

Բ. Սահմանում

- Յունարէնով «բնորոշել» բառը թարգմանաբար կը նշանակէ՝ «յստակ զանազանում»:
  - Հաւանաբար այս պարգեւին աւելի ճշգրիտ նկարագրութիւնը կը գտնուի Աստուածաշունչի Նոր Միջագային Տարբերակին (NIV Bible) մէջ, որ կ'ըսէ՝ «հոգիներու միջեւ զանազանութիւն»:
- Հոգիներու միջեւ զանազանելու պարգեւը գերբնական խորաթափանցութիւն մըն է հոգիներու աշխարհէն ներս:
  - ա. Ան կը յայտնէ մարդու մը, կացութեան մը, արարքի մը կամ պատգամի մը ետին գտնուող հոգիին կամ հոգիներուն տեսակը:
  - բ. Անիկա հոգիի մէջ դրուող գիտակցութիւն մըն է, որ կու գայ գերբնական յայտնութեան մը միջոցաւ ինչ կը վերաբերի որեւէ հոգիի մը աղբիւրին, բնոյթին եւ գործունէութեան:
- Անիկա յստակ զանազանութիւն մը կը կատարէ եւ հոգիի մը գոյութիւնը կը հաստատէ: Այս պարգեւին գործունէութեամբ մենք պիտի կարենանք հաստատել.
  - ա. Աստուծոյ ներկայութիւնը
  - բ. Սուրբ Հոգիին ներկայութիւնն ու գործունէութիւնը
  - գ. Սուրբ հրեշտակներուն ներկայութիւնն ու գործունէութիւնը
  - դ. Մարդկային հոգիի մը բնոյթը
  - ե. Ստանալի ներկայութիւնը
  - զ. Չար ոգիներու (դէմոն) ներկայութիւնն ու գործունէութիւնը

Գ. Հոգիներու զանազանութեան պարզելին նպատակը

1. Կապուած սուրբեր կրնան ազատիլ։
2. Սատանային ծրագիրները կը զիտցունին։
3. Մեղքը կրնայ դուրս պահուիլ այն տեղէն, ուր սուրբեր գոյութիւն ունին։
4. Սխալ յայտնութիւնը երեւան կը հանուի։

Դ. Խաբկանքի հոգիներ

1. «Հոգին յատկապէս կ'ըսէ թէ վերջին տեսնները՝ ոմանք պիտի հեռանան հաւատէն, ուշադրութիւն դարձնելով մոլորեցուցիչ ոգիներու եւ դէւերու վարդապետութիւններու։ Կեղծաւորութեամբ սուտ պիտի խօսին, խարձուած խղճմտանք պիտի ունենան» (Ա.Տմ 4.1-2)։
2. «Բայց չար ու զեղծարար մարդիկ աւելի՛ պիտի յառաջանան չարութեան մէջ՝ մոլորեցնելով եւ մոլորելով» (Բ.Տմ 3.13)։

Ե. Փորձել Հոգիները

1. Ծեմարտութեան Հոգին
2. Սխալի ոգին

II. ՍԱՏԱՆԱՆ՝ ԼՈՅՍԻ ՀՐԵՇՏԱԿ ՄԸ, ԵՒ ԻՐ ՍՈՒՏ ԱՌԱՔԵԱԼՆԵՐԸ

- Պօղոս զգուշացուց. «Որովհետեւ այդպիսիները սուտ առաքեալներ են, նենգ գործաւորներ, որ իրենք զիրենք կը կերպարանափոխեն Քրիստոսի առաքեալներու։ Եւ զարմանալի չէ, որովհետեւ նոյնիման Սատանան լուսաւոր հրեւտակի կը կերպարանափոխուի։ Ուրեմն մեծ բան մը չէ, որ անոր սպասարկուներն ալ արդարութեան սպասարկուներու կերպարանափոխուին։ Անոնց վախճանը պիտի ըլլայ իրենց գործերուն համեմատ» (Բ.Կր 11.13-15)։

Ա. Օրինակ՝ հարցուկ ոգիով բախտագուշակ աղափինը

- Երբ հարցուկ ոգիով բախտագուշակ աղափինը կը հետեւէր Պօղոսին՝ անոր մասին լաւ բաներ խօսելով, ան հոգիներու միջեւ զանազանելու պարզելը կիրարկեց եւ հանչեցաւ անոր մէջ գտնուող «գուշակութեան ոգին» եւ դառնալով ոգիին ըսաւ՝ «Յիսուս Քրիստոսի անունով կը հրամայեմ քեզի, ելի՛ր ատկէ» (Գրծ 16.16-18)։

Բ. Չար ոգիներուն վտարումը

1. Յիսուս ըսաւ, թէ մենք՝ իբրեւ հաւատացեալներ, կը վտարենք դէւերը (Մր 16.17)։
2. Ըստ Դուկաս 10.19-20ին, Յիսուս մեզի տուաւ իշխանութիւնը օձերու եւ կարիներու վրայ կոխելու ինչպէս նաեւ՝ ամէն իշխանութիւն թեմամիսին վրայ, եւ ոչինչ պիտի վնասէ մեզի։

III. ԳԻՏՈՒԹԵԱՆ ԽՕՍՔ

Ա. Սահմանում

1. Գիտութեան խօսքը Սուրբ Հոգիին կողմէ գերբնական յայտնութիւն մըն է կարգ մը իրականութիւններու (անցեալի կամ ներկայի)՝ անձի մը կամ կացութեան մը մասին, որ բնական միտքին միջոցաւ չէր պարզուած։
2. Այդ գիտութիւնը մեր միտքերուն կը յայտնուի մեր հոգիներուն միջոցաւ։
3. Անիկա յաճախ կ'ընդմիջէ մեր միտքերուն բնական ընթացքը։
  - ա. Անիկա կու գայ իբրեւ միտք մը, անուն մը, զգացում մը, գաղափար մը, տեսիլք մը կամ «ներքին գիտակցութիւն» մը։
  - բ. Նոյնիսկ երբ անիկա բառ մը ըլլայ նախադասութեան մը մէկ վոքը մասին մէջ, գիտութեան խօսքը տուեալ կացութեան մէջ Աստուծոյ ամբողջական գիտութեան մէկ վոքը մասն է։

Բ. Գիտութեան խօսքի մը նպատակը

1. Հաւատացեալներուն գերբնականօրէն յայտնուող այդ «գիտակցութիւնը» պիտի նպաստէ եւ օգնէ Իր ժողովուրդին մէջ Աստուծոյ նպատակներուն կատարելագործման։
2. Անիկա պէտք է փառք բերէ Աստուծոյ եւ ոչ մարդոց։
3. Անիկա կ'օգնէ, որ ճշգրտութեամբ եւ ազգաւ կերպով ծառայենք։

- Անհիկա վտանգէն պիտի գգուեացնէ, քաջալերէ, մեղքը բացայայտէ եւ մեզ «նիւթ դամբուն մէջ պահէ» մեր առօրեայ կեանքին եւ առաքելութեան մէջ:

**Գ. Յիսուս գործեց գիտութեան խօսքով (Յհ 5.19-20):**

1. Մենք ի՞նչպէս կրնանք Յիսուսէն աւելի մեծ գործեր ընել:
2. Բանալին յայտնութեան պարզեւնեքը կիրարկել սորվիլն է:

**Դ. Պօղոսի օրինակը**

1. Պօղոս կիրարկեց գիտութեան խօսքը երբ իր հոգիին մէջ «տեսաւ», որ Լիսիարայի անդամաւոր մարդը ունէր բուժուելու հաւատքը:
  - «Ասիկա մտիկ կ'ընէր Պօղոսի խօսքերը, որ ակնապիւշ նայելով անոր ու նշմարելով թէ բուժուելու հաւատ ունի՝ բարձրաձայն ըսաւ. «Ուղի՛ղ կանգնէ ոտքերուդ վրայ»: Ան ալ ցատկեց ու քալեց» (Գրծ 14.8-9):
2. Յանախ մարդոց մասին գիտութեան խօսքը մեզի կը տրուի երբ մենք նայինք անոնց աչքերուն կամ դպնանք անոնց:
  - Բանալին Սուրբ Հոգիին մտիկ ընելն է եւ հաւատքով ակնկալելը, որ այդ պարզեւր պիտի կիրարկուի:

**IV. ԻՄԱՍՏՈՒԹԵԱՆ ԽՕՍՔ**

**Ա. Սահմանում**

1. Իմաստութեան խօսքի պարզեւր Սուրբ Հոգիին կողմէ գերբնական յայտնութիւն մըն է, որ հաւատացեալին կու տայ Աստուծոյ իմաստութիւնը յառաջ երթալու որոշ ուղեգիծի մը մէջ<sup>1</sup> հիմնուելով բնական կամ գերբնական գիտութեան վրայ:
2. Անհիկա Աստուծոյ ծրագիրն ու նպատակը կը յայտնէ մեր կեանքին եւ առաքելութեան մէջ:
  - ա. Անհիկա կը յայտնէ, թէ Աստուած ի՞նչ կը նպատակադրէ, որ պէտք է կատարուի կարճ ժամանակուան մէջ կամ մօտիկ կամ հեռու ապագային:
  - բ. Անհիկա կը յայտնէ, թէ անհատ մը կամ հաւատացեալներու խումբ մը ի՞նչ պէտք է ընէ եւ ի՞նչպէս պէտք է յառաջանայ Աստուծոյ կամքին համաձայն:
3. Իմաստութեան խօսքը ընդհանրապէս կը կիրարկուի եւ կը հոսի գիտութեան խօսքին հետ միասին:
4. Իմաստութեան խօսքը բնական իմաստութեան ձիւքը չէ:
  - ա. Անհիկա բառ մը կամ կարճ նախադասութիւն մըն է:
  - բ. Անհիկա մաս մըն է եւ ոչ ամբողջութիւնը:
  - գ. Պօղոս գրեց՝ «Արդարեւ հիմա մասա՛մբ գիտենք եւ մասա՛մբ կը մարգարէանանք» (Ա.Կր 13.9):
5. Գիտութեան խօսքին նման, իմաստութեան խօսքը յանախ կ'ընդհատէ մեր բնական միտքերը երբ կը յայտնուի մեր հոգիին մէջ:
  - Անհիկա կու գայ իբրեւ գաղափար մը կամ տեսիլ մը, որուն մէջ մենք գմեզ կը տեսնենք՝ հոգիով, գործ մը որոշ ձեւով կատարելու ընթացքին նախօրէն գայն իսկապէս կատարելը:

**Բ. Գիտութեան եւ իմաստութեան խօսքերը միասին կը գործեն:**

1. Գիտութեան խօսքը եւ իմաստութեան խօսքը այնքան մօտիկ գործակցութիւն ունին իրարու հետ, որ երբեմն դժուար է իրարմէ անջատել գտնում:
2. Մէկը իրականութիւններ կը յայտնաբերէ գերբնականօրէն իսկ միւսը իմաստութիւնը կու տայ այդ իրականութիւններուն հետ պէտք եղած ձեւով վարուելու:

**Գ. Օրինակներ՝ գիտութեան խօսքին եւ իմաստութեան խօսքին գործակցութեան վերաբերեալ:**

1. Յիսուս՝ ջրհորին մօտ հանդիպած կնոջ հետ
  - ա. Երբ Յիսուս կը ֆարգէր ջրհորին մօտ կեցած կնոջ, Ան գիտութեան խօսքով գիտցաւ, թէ ան հինգ ամուսիններ ունեցած էր եւ այն մարդը, որուն հետ կ'ապրէր իր ամուսինը չէր:
  - բ. Բնական միտքը ֆարկածուելու վիճակը պիտի տար անոր, սակայն Յիսուս նաեւ իմաստութեան խօսք ստացաւ այնպիսի ազդու կերպով ֆարգելու անոր, որ ան եւ շատ ուրիշներ փրկուեցան (Յհ 4.19-29):
2. Յիսուս եւ Նազարոս

ա. Երբ Յիսուսին տեղեկացուցին, թե Իր բարեկամ Ղազարոսը հիւանդ էր, Ան գիտութեան խօսքին միջոցաւ գիտցաւ, թէ Ղազարոս արդէն մահացած էր:

բ. Բայց իմաստութեան խօսքին միջոցաւ Ան գիտցաւ, թէ ի՛նչ պէտք էր ըսել. «Այս հիւանդութիւնը մահուան համար չէ՝ Իսկապա Աստուծոյ փառքին համար, որպէսզի Աստուծոյ Որդին փառաւորուի անով» (Յհ 11.4):

- Ապա Յհ 11.14ին մէջ Յիսուս անոնց պարզապէս ըսաւ՝ «Ղազարոս մեռաւ»:

գ. Իմաստութեան խօսքին միջոցաւ Յիսուս գիտցաւ, թէ ի՛նչ պէտք էր ընել եւ ըսել:

դ. Ան գիտցաւ, որ չորս օրով պէտք էր յետաձգել դէպի Բերանիա կատարելիք իր համբողջութիւնը (Ղազարոսը մեռելներէն յարուցանելու համար) եւ ապա Մարթային ըսաւ՝ «Եղբայրդ յարութիւն պիտի առնէ» (Յհ 11.23):

### 3. Պետրոս

ա. Պետրոս պատրաստ էր Կռնելիոսին տունը երթալու հակառակ անոր հեթանոս ըլլալուն, որովհետեւ տեսիլքի ձեւով գիտութեան խօսք մը ունեցած էր Յոպպէի մէջ, Սիմոն կաշեգործին տան տանիքը գտնուած տտեղը:

բ. Ան ուրիշ գիտութեան խօսք մը ստացաւ երբ Հոգին իրեն ըսաւ՝ «Ահա՛ երեք մարդիկ քեզ կը փնտտեն»: Այդ յայտնութիւնը շարունակուեցաւ իմաստութեան խօսքով մը՝ հետեւեալ բառերով. «Հետեւաբար կանգնէ՛, իջի՛ր, ու գնա՛ անոնց հետ՝ առանց տատամսելու, որովհետեւ ե՛ս դրկեցի զանոնք» (Գրծ 10.19-20):

### 4. Իմաստութեան խօսքին միջոցաւ.

ա. Անանիա Յուդային տունը դրկուեցաւ, Ուղիղ փողոցին մէջ, Պօղոսին վրայ ձեռք դնելու համար:

բ. Ազարոս զգուշացուեցաւ գալիք երաշտին եւ Պօղոսին բանտարկութեան մասին:

գ. Պօղոս զգուշացուեցաւ գալիք փոթորիկէն եւ նաւաբեկումէն:

## ԵԶՐԱԿԱՑՈՒԹԻՒՆ

Յայտնութեան պարգեւները մեզ կը պատրաստեն ազդու առաքելութեան համար: Անոնք մեզ կը պատրաստեն գալիքին համար եւ կը փրկեն մեր կեանքը:

Զօրութեան պարգեւներուն դասին մէջ պիտի տեսնենք, թէ յայտնութեան պարգեւները ի՛նչպէս գործի կը լծեն հաւատքի եւ հրաշագործութեան պարգեւները եւ ի՛նչպէս միասնաբար կ'աշխատին բժշկութեան պարգեւին հետ:

## ԽՄԲԱՅԻՆ ՔՆՆԱՐԿՈՒՄ

1. Քննարկեցէ՛ք յատկանիւթերը գանազան հոգիներուն, որոնք կրնան գործել որեւէ կացութեան կամ հանգիպումի մէջ, եւ ի՛նչպէս կրնան գանազանել անոնց եւ Աստուծոյ Հոգիին միջեւ: Տուէ՛ք քննարկներ:
2. Երբ կացութեան մը մէջ պիտի ոգիներու գործունէութեան կ'անդրադառնանք, ի՞նչպէս պէտք է վարուիմք անոնց հետ:
3. Քրիստոսի հաւատացողներուն համար ի՞նչպէս կարելի է աւելի մեծ գործեր կատարել քան ինքնին Քրիստոս, ըստ Յհ 14.12ին:
4. Ի՞նչպէս կը գործակցին իմաստութեան խօսքն ու գիտութեան խօսքը:

## ԻՆՔՆԱՇԽԱՏՈՒԹԻՒՆ

Սերտէ՛ հետեւեալ աստուածաբանական հաստատումները եւ ամփոփ ձեւով նշէ՛ այն պարգեւները, որոնք գործեցին իւրաքանչիւրին մէջ, եւ ըսէ՛, թէ անոնք ի՞նչպէս կ'ապուած են իրարու:

1. Յհ 4.5-26
2. Գրծ 10.1-23
3. Գրծ 14.6-18



ԳԵՐԲՆԱԿԱՆ ԿԵԱՆՔ  
ՀԻՆԳԵՐՈՐԴ ՊԱՀ  
Զօրութեան Պարգևները

ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆ

Զօրութեան պարգևները մարդոց ընդհանուր Աստուծոյ ուժին դրսևորումներն են՝ հաւատքի պարգևին, հրաւիրութեան եւ բժշկութեան պարգևներուն միջոցաւ:

Թէ՛ ձայնային պարգևները եւ թէ՛ գօրութեան պարգևները մօտէն կը գործակցին Սուրբ Հոգիին յայտնութեան պարգևներուն հետ, մինչ անոնք կը հոսին եւ կը գործեն իրարու հետ: Այդ պատճառով կարեւոր է որ ամէն հաւատացեալ մարդուի եւ պատրաստ ըլլայ կիրարկելու Սուրբ Հոգիին բոլոր ինչ պարգևներն ալ:

ԴԱՍԻ ՆԱԽԱԳԻԾ

I. ՀԱԻԱՏՔԻ ՊԱՐԳԵՆԵՐ

Ա. Սահմանում

- Հաւատքի պարգևը գերբնական հաւատք մըն է՝ յատուկ ժամանակուան մը եւ նպատակի մը համար:
- Անիկա գօրութեան պարգև մըն է՝ որոշ գործ մը իրականացնելու համար, ինչ պայմանի մէջ ալ որ ըլլաս, այդ յատուկ պահուն:
- Այս պարգևը կը տրուի երբ անոր կարիքը կը զգացուի յատուկ գործի մը կատարման համար, անմիջապէս կամ շատ մօտիկ ապագային:
  - Երբ իմաստութեան խօսքը կը տրուի՝ մեզի թելադրելով, թէ գործ մը ի՛նչպէս պիտի կատարուի, անիկա կայծ պիտի տայ հաւատքի պարգևին, որպէսզի համարձակօրէն կատարէ այդ գործը, ըստ Աստուծոյ արդէն իսկ ծրագրածին:

Բ. Հաւատքի պարգևին ստացումը

- Այս պարգևը կը ստացուի յայտնութեան պարգևներուն գործունէութեամբ:
- Գերբնական հաւատքը հաւատացեալին կը տրուի երբ իմաստութեան խօսքով կը յայտնուի Աստուծոյ ուժին մէկ ցուցադրութիւնը, որ շուտով պիտի կատարուի:
- Ան մեզ կ'արձակէ, որ համարձակօրէն վարուինք այն յայտնութեան նկատմամբ, որ նոր ստացած կ'ըլլանք:

Գ. Հաւատքի պարգևին դրսևորումը

- Յանախ հաւատքի պարգևը դեր ունի հրաւիրութեան պարգևին եւ բժշկութեան պարգևներուն գործունէութեան մէջ:
  - ա. Անիկա կրնայ դրսևորուիլ ուժեղ հրահանգի մը տուչութեան միջոցաւ:
  - բ. Յիսուս փոթորիկին ըստ՝ «Խաղաղէ՛»:
  - գ. Յիսուս բարձրաձայն գոչեց իր բարեկամին գերեզմանին դիմաց. «Ղազարո՛ս, դո՛ւրս եկուր»:
- Իմաստութեան խօսքին միջոցաւ ըլլալիս մասին յայտնութիւն մը ստանալէ ետք, հաւատքի պարգևը կը տրուի հաւատացեալին գործը վերջացնելու համար:

- ա. Այս յատուկ պարգևը կ'արձակէ հաւատացեալը, որ համարձակօրէն վարուի Աստուծոյ կողմէ իրեն տրուածին նկատմամբ:
- բ. Երբ հաւատքի պարգևը կը տրուի, հաւատալու համար պայքար չի տարուիր: Մենք կը գիտնանք Աստուծոյ խօսքը ի՛նչ կ'ըսէ եւ կը հանչնանք Անոր կամքը այդ կացութեան վերաբերեալ:
- գ. Մենք կը գիտնանք, թէ մեր մէջ գտնուող Աստուծոյ ուժը ցուցադրուելու վրայ է՝ այդ ուժին արձակումով:
- դ. Մենք համարձակօրէն կը խօսինք եւ կ'արձակենք հաւատքի այս գերբնական պարգևը հրաշագործութեան կամ բժշկութեան պարգևներուն միջոցաւ:

**Դ. Հաւատքի պարգևը համարձակութիւն կ'արձակէ:**

1. Յոնաթան հաւատքի պարգևը կ'արձակէ մեզ համարձակ հաստատումներ կատարելու՝ գերբնական յայտնութեամբ:
2. Յիսուս թուզի ծառին ըսաւ՝ «Ասկէ ետք ո՛չ մէկ պտուղ ըլլայ վրայ՝ յաւիտեան» (Մտ 21.19):
3. Պետրոս Սափիրայիին ըսաւ՝ «...» Ահա՛ ամուսինդ թողողներուն ոտները դրան հոյ են, քէ՛զ ալ պիտի հանեն դուրս՝: Եւ անմի՛ջապէս կիներ ինկաւ անոր ոտներուն հոյ ու շունչը փչեց» (Գրծ 5.9-11):
4. Պօղոս Եղիմաս մոզին ըսաւ՝ «Ո՛վ ամէն նենգութեամբ ու չարագործութեամբ լեցուն Չարախօսի՛ որդի, թշնամի ամբողջ արդարութեան, պիտի չդադրի՞ս խեղաբարեւէլէ Տիրոջ ուղիղ համբաները: Ահա՛ հիմա Տիրոջ ձեռքը հոս վրայ է. կոյր պիտի ըլլաս եւ ատեն մը պիտի չտեսնես արեւ՝: Անմի՛ջապէս մթութիւն ու խաւար իջաւ անոր վրայ, եւ շրջելով մէկը կը փնտռէր՝ որ ձեռքէն բռնելով տանէր զինք» (Գրծ 13.10-11):
5. Դաւիթին եւ Գողիարթին օրինակը
  - ա. Երիտասարդ Դաւիթ ստացաւ իմաստութեան խօսք մը, որ հաւատքի պարգևը արձակեց երբ հսկային՝ Գողիարթին դէմ ելաւ ան:
  - բ. Դաւիթ համարձակօրէն ըսաւ Սաւուղ թագաւորին՝ «Անոր պատհառով ո՛չ մէկուն սիրտը թող կտարի. հոս ծառայ պիտի երթայ եւ այդ Փղշտացիին հետ կուռի» (Ա.Թգ 17.32):
  - գ. «Դաւիթ Փղշտացիին ըսաւ. «Դուն ինծի սուրով, նիզակով ու տէգով կու գաս, բայց ես զօրքերու Տէրոջ, հոս նախատած Իսրայէլի զօրասիւններուն Աստուծոյն անունով քեզի կու գամ: Այսօր Տէրը քեզ իմ ձեռքս պիտի մատնէ. ես քեզ պիտի մեղցնեմ, վրայէդ գլուխդ պիտի առնեմ...»» (Ա.Թգ 17.45-46):
6. Կրակի հնոցին օրինակը (Դն 3.16-17)

**II. ՀՐԱՇԱԳՈՐԾՈՒԹԻՒՒՆ**

**Ա. Սահմանում**

- Հրաշագործութիւնը գերբնական միջամտութիւն մըն է բնութեան սովորական ընթացքին մէջ. անիկա գերբնական ցուցադրութիւն մըն է Աստուծոյ ուժին, որուն միջոցաւ բնութեան օրէնքները կը փոխուին, առկախ կը մնան կամ հակադրուին տակ կ'աւանդին:

**Բ. Հրաշագործութիւնը կիրարկման ընթացքին**

1. Հրաշագործութեան կիրարկումը կը սկսի գիտութեամբ մը, որ յոնաթան գերբնականօրէն կը տրուի՝ գիտութեան խօսքին միջոցաւ:
2. Ապա կը ստանանք գիտութեան խօսք մը, որով մենք գերբնականօրէն մենք զմեզ կը տեսնենք հրաշք մը կատարելու ընթացքին մէջ, նախքան անոր իրապէս կատարուիլը:

3. Ապա, հաւատփի պարգեւը կ'արձակուի եւ մենք համարձակօրէն կը սկսինք կատարել այն, ինչ որ տեսած էինք, որ կը կատարենք երբ իմաստութեան խօսքը ստացանք:
  - ա. Անիկա կը կոչուի «հրաւիրութիւն», որովհետեւ մենք գործօն մասնակցութիւն կը բերենք հրաւիրին կատարման մէջ:
    - բ. Այն ինչ որ «տեսանք», որ կը կատարենք իմաստութեան խօսքին միջոցաւ, որ հաւատփի պարգեւը արձակեց, կը սկսինք համարձակօրէն «կատարել» այդ կացութեան մէջ մեր ծառայութեան ընթացքին:

Գ. Դիւրին է հրաւիր գործելը:

1. Մինչ Սուրբ Հոգիին պարգեւներուն այս դիւրին եւ արագ ընթացքը ի գործ կը դրուի, կը յայտնաբերենք, որ հրաւիրութեան գերբնական պարգեւը կիրարկելը պարզապէս նոյնքան դիւրին է որքան լեզուներով պատգամ տալը կամ Սուրբ հոգիին միւս պարգեւներուն կիրարկումը:
  2. Օրինակներ.
    - ա. Մովսէս (Ելք 7.9: 14.13-16):
      - բ. Եղիայի եւ Եղիսէի Յորդանան գետը ճեղքելը (Դ.Թգ 2.8, 13-14):

Դ. Յիսուսի հրաւիրները

1. Յիսուսի կատարած առաջին հրաւիրը Կանայի մէջ էր, ուր Ան ջուրը գինիի վերածեց: Նախքան Յիսուսի կողմէ ջուրի կարասները ջուրով լեցնելու ցուցմունքը արուիլը սպասարկուներուն, անոնք Մարիամէն ստացած էին թելադրութիւն մը. «Ի՛նչ որ ըսէ՛ք, ըրէ՛ք» (Յհ 2.5):
  2. Եթէ մենք պիտի կիրարկենք հրաւիրութեան գերբնական պարգեւը, նախ պէտք է լսենք Անոր ձայնը եւ ապա պարզապէս հնազանդինք Անոր խօսքին:
    - Հրաւիրներ կատարելը Աստուծո՛վ մեր լսածին հնազանդելու արարք մըն է:
  3. Հրաւիրութեամբ Յիսուս այրիին որդին մեռելներէն յարուցանեց, ջուրին վրայէն փալեց եւ չորս հազար հոգի կերակրեց եօթ հացով եւ ֆանի մը ձուկով:
    4. Երբ Յիսուս Ղազարոսը յարուցանեց, Ան նախ ստացաւ գիտութեան խօսք մը, թէ՛ Ղազարոս արդէն մահացած էր:
      - ա. Ապա Ան իմաստութեան խօսք մը ստացաւ, թէ՛ ե՛րբ եւ ի՛նչպէս պիտի յարուցանէր գայն:
        - բ. Այդ իմաստութեան խօսքը արձակեց հաւատփի պարգեւը՝ համարձակօրէն գործելու համար: Յիսուս կանգնեցաւ գերեզմանին առջեւ եւ սկսաւ «գործադրել» այն ինչ որ իմացած էր իմաստութեան խօսքին միջոցաւ:
          - գ. Ան թելադրեց, որ հրէն գերեզմանին ֆարը եւ ապա համարձակօրէն բարձրաձայն ըսաւ՝ «Ղազարո՛ս, դո՛ւրս եկուր»:

**III. ՀԱԻԱՏԱՑԵԱԼՆԵՐ ՀՐԱՇԱԳՈՐԾՈՒԹԻՒՆ ԿԸ ԿԻՐԱՐԿԵՆ**

Ա. Ջուրի վրայ փալել

1. «Երբ առակերտները տեսան գայն՝ որ կը փալէր ձովուն վրայ, վրդովեցան եւ ըսին թէ աչքի երեւոյթ մըն է, ու վախճալով ազդակեցին: Իսկայն Յիսուս խօսեցաւ անոնց եւ ըսաւ. ”Քաջալերուեց՛էք, է՛ս եմ, մի՛ վախճա՛մ“: Պետրոս պատասխանեց անոր. “Տէ՛ր, եթէ դո՛ւն ես, հրամայէ՛ ինձի՛” որ գամ քեզի ջուրերուն վրայէն“: Ան ալ ըսաւ. “Եկո՛ւր“: Երբ Պետրոս նաւէն իջաւ, փալեց ջուրերուն վրայէն՝ Յիսուսի փով երթալու համար» (Մտ 14.26-29):

2. Եթէ մենք պիտի կիրարկենք հրաւիրութեան պարգեւը, մենք պէտք է յարթահարեմք մեր ձախողելու վախը եւ ապուշ երեւելու վախը:
  - ա. Մենք պիտք է դուրս գանք մեր սովորական հանգիստի սահմաններէն:
  - բ. Նսենք, որ Պետրոս նախ խանդավառութեամբ փափաքեցաւ քաղել գերբնական պարգեւներուն ներգործութեան մէջ երբ ըսաւ՝ «...հրամայէ՛ ինձի՛ որ գամ քեզի ջուրերուն վրայէն»:
  - գ. Պետրոս իմաստութեան խօսք եւ հաւատքի պարգեւ ստացաւ երբ լսեց Յիսուսի ձայնը, որ կ'ըսէր «Եկո՛ւր»:
  - դ. Պետրոս անմիջապէս հնազանդեցաւ, նաւէն դուրս ելաւ եւ սկսաւ կիրարկել հրաւիրութեան պարգեւը մինչ ան ջուրին վրայէն կը քաղէր:

Բ. Զուկի առատ սրբը (Ղկ 5.4-7):

Գ. Հրաւիրութիւնը այսօրուան հաւատացեալներուն համար

1. Պետրոս փորձած էր ձուկ սրբալ ամբողջ գիշերը՝ առանց արդիւնքի:
  - \* Շատեր, Պետրոսի նման, ցարդ կը փորձեն գործել իրենց սեփական գիտութեան համաձայն:
2. Մենք ալ պէտք է ըսենք այն ինչ որ Պետրոս ըսաւ. «Բայց...քու խօսքիդ համար» (Ղկ 5.5):
  - ա. Մենք պէտք է ժամանակ տրամադրենք Իրեն լսելու՝ հոգիներ գանազանելու, գիտութեան խօսքի եւ իմաստութեան խօսքի յայտնութեան պարգեւներուն միջոցաւ Իր խօսքը ստանալու:
  - բ. Հաւատքը պիտի գայ եւ մենք պէտք է անմիջապէս հնազանդինք եւ մտնենք հրաւիրութեան գերբնական պարգեւին ծիրէն ներս:
3. «Ճշմարտապէս, ճշմարտապէս կը յայտարարեմ ձեզի. ա՛ն որ կը հաւատայ ինձի, ի՛նք ալ պիտի ընէ այն գործերը՝ որ ես կ'ընեմ, եւ անոնցմէ աւելի՛ մեծ գործեր պիտի ընէ, որովհետեւ ես կ'երթամ Հօրս քով» (Յհ 14.12):

## ԽՄԲԱՅԻՆ ՔՆՆԱՐԿՈՒՄ

1. Հաւատքի պարգեւը ի՞նչպէս կը գործէ հաւատացեալներուն մէջ այսօր:
2. Քննարկեցէ՛ք հաւատքի պարգեւին եւ հրաւիրութեան պարգեւին միջեւ գոյութիւն ունեցող յարաբերութիւնը:
3. Վկայեցէ՛ք ձեր կամ ուրիշներու կեանքներուն մէջ վերջերս ձեր տեսած հրաւիրութեան մասին:
4. Կը հաւատա՞ք, թէ Աստուած այսօր եւս հրաւիրէր կը կատարէ հաւատացեալներու միջոցաւ:
5. Զեր կեանքներուն եւ պայմաններուն մէջ հրաւիրութեան կարիքը կը գգա՞ք:
6. Փոքր խումբերու մէջ համաձայնեցէ՛ք եւ հաւատացէ՛ք, որ Աստուած աղօթքի միջոցաւ պիտի կատարէ այն հրաւիրութիւնը, որոնց կարիքը ունիք:

## ԻՆՔՆԱՇԽԱՏՈՒԹԻՒՆ

1. Աստուածաշունչին մէջ գտի՛ր օրինակներ հաւատքի պարգեւին եւ հրաւիրութեան պարգեւին գործադրութեան վերաբերեալ: Գտի՛ր չորս օրինակներ Հին Կտակարանէն եւ չորս օրինակներ Նոր Կտակարանէն: Ընտրէ՛ անոնք, որոնց շանդարդարձանք այս դասին մէջ:
  - ա. Հին Կտակարանի օրինակներ
  - բ. Նոր Կտակարանի օրինակներ
2. Կեանքիդ մէջ պէտք ունի՞ս հրաւիր մը: Գրէ՛ այդ մասին եւ աղօթքով Աստուծմէ խնդրէ՛ գայն:



**ԳԵՆԲՆԱԿԱՆ ԿԵԱՆՔ**  
**ՎԵՑԵՆՈՐԴ ՊԱՀ**  
**ԲԺՇԿՈՒԹԵԱՆ ՊԱՐԳԵԱՆԵՐԸ**

**ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆ**

Բժշկության պարգևները գերբնական հաղորդումն են Աստուծոյ բուժիչ զորության անոր կարիքը ունեցող մարդուն: Անոնք կը նկարագրուին իբրև «պարգևներ» (յոզնակիով), որովհետև Սուրբ հոգիին միւս ինը պարգևներուն մեծ մասը մեծ դերակատարութիւն կ'ունենան մինչ մենք բժշկության ծառայութիւնը կը կատարենք հիւանդներու համար: Անոնց մասին յոզնակիով կը խօսինք նաև անոր համար, որ հիւանդներուն բժշկութիւն հաղորդելու կամ բժշկութեան ծառայութիւնը կատարելու բազմաթիւ ձևեր կան:

Բժշկութիւն ստացող անձը բժշկության պարգևները ստացողն է: Կարծես մենք նամակաբաշխ մըն ենք, որ պարգապէս այդ պարգևները կը մատակարարէ ուրիշներու:

**ԴԱՍԻ ՆԱԽԱԳԻԾ**

**I. ԲԺՇԿՈՒԹԻՒՆ՝ ՀՈԳԻՆԵՐՈՒ ԶԱՆԱԶԱՆՈՒԹԵԱՆ ՄԻՋՈՑԱԻ**

Ա. Յանախ վատառողջութեան դիւային հոգիները արմատն են անձի մը անհանգստութեան կամ հիւանդութեան:

1. Վատառողջութեան այդ դիւային ոգիները նաև կը ճանչցուին իրենց յատուկ գործերով, ինչպէս օրինակ՝ յօդացաւի ոգի կամ քաղցկեղի ոգի:
2. Շատ անգամ էրբ անձ մը ունի հիւանդութիւն մը, զոր բժշկական գիտութիւնը անբուժելի կը կոչէ, անոր պատճառը վատառողջութեան դիւային ոգի մըն է:
3. Հոգիներու զանազանութեան պարգևին գործունէութեամբ, Սուրբ Հոգին «Իր մատը կը դնէ» հարցին արմատին:  
ա. «Բայց էթէ ես Աստուծոյ մատով կը հանեն դէերը, ուրեմն Աստուծոյ թագաւորութիւնը հասած է ձեր վրայ» (Ղկ 11.20):  
բ. Աստուծոյ մատը այս պարագային կրնայ ըլլալ Սուրբ Հոգիին յայտնութեան պարգևը:
4. Ազատումով՝ հոգին դուրս կը վտարուի եւ անձը ազատ կ'արձակուի այդ վատառողջութենէն եւ հիւանդութեան ախտանշաններէն:

Բ. Օրինակներ

1. Վատառողջութեան ոգին ունեցող կիներ (Ղկ 13.11-13, 16):
2. Յիսուս դուրս վտարեց համարութեան ոգին  
ա. «Երբ անոնք դուրս ելան, ահա՛ համար դիւանար մարդ մը բերին իրեն: Երբ դէրը ելաւ, համարը խօսեցաւ» (Մտ 9.32-33):  
բ. Այդ մարդուն համար կ'ըսէին, թէ դիւանար էր, բայց անոր միակ ախտանշանը այն էր, թէ չէր կրնար խօսիլ մինչեւ, որ համարութեան ոգին դուրս վտարուեցաւ:
3. Երկու օրինակներուն մէջ ալ Յիսուս ազգուօրէն կատարեց իր ծառայութիւնը եւ՝ հոգիներու զանազանութեան պարգևին կիրարկումով, ուղղակի գնաց հարցին արմատին:

**II. ԳԻՏՈՒԹԵԱՆ ԽՕՍՔ ՍՏԱՆԱԿ՝ ԲԺՇԿՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ**

Ա. Բժշկության ծառայութիւն կատարել՝ գիտութեան խօսքով մը:

1. Յանախ, բժշկության պարգևներուն կիրարկման ժամանակ, Աստուած գիտութեան խօսք մը պիտի յայտնէ յատուկ հիւանդութեան մը մասին, զոր կ'ուզէ բժշկել:

2. Այս պարգևին միջոցառ մենք գերբնականորեն կը գիտնանք հիւանդութեան անունը ինչպէս նաեւ մարմնի այն անդամին, բաժինին կամ ցաւի վայրին մասին, որ պէտք ունի բուժուելու:
  - ա. Անիկա կրնայ յայտնուիլ մեր մարմնին այդ բաժինին մէջ անհանգստութեան զգացումի մը, ճնշումի մը, ցաւի մը կամ թմրութեան որոշ զգացումի մը միջոցառ:
  - բ. Անիկա կրնայ յայտնուիլ իբրեւ գաղափար մը կամ տեսիլ մը մարմնին այդ բաժինին վերաբերեալ այն անձին, որուն համար Աստուած կ'ուզէ, որ բժշկութեան ծառայութիւնը կիրարկենք:
3. Երբ այդ մէկը պատահի անձի մը համար մեր ծառայութեան ընթացքին, մենք ընդհանրապէս կ'առաջնորդուինք Սուրբ Հոգիին կողմէ, որ այդ մարդուն ըսենք Աստուծոյ յայտնածը եւ հարցնենք անոր եթէ կ'արտօսէ, որ բժշկութեան պարգևը կիրարկենք իր մարմնին այդ բաժինին համար:
4. Երբ խումբի մը առջեւ մեր ծառայութիւնը կը կատարենք, մենք կրնանք առաջնորդուիլ յայտարարելու, թէ՛ «Աստուած ինձի կը յայտնէ, թէ ներկաներէն մէկը այսինչ յատուկ պարագան ունի, եւ Աստուած կ'ուզէ բժշկել քեզ հիմա»:

- Աստուած ի՛նչ որ կը յայտնէ, միշտ կը բժշկէ:

**Բ. Գիտութեան խօսքը երբեմն կը յայտնէ յատուկ անձի մը մասին:**

1. Մեծ թիւով հիւանդներ, կոյրեր, կաղեր եւ անգամալոյճներ կային Բերիեզգայի աւագանին մօտ: Սակայն Յիսուս Հոգիով առաջնորդուեցաւ դէպի յատուկ անձ մը:
2. «Հոն մարդ մը կար, որ հիւանդութիւն մը ունէր երեսուներ տարիէ ի վեր: Երբ Յիսուս տեսաւ զայն՝ պառկած, ու թէ արդէն շատ ժամանակէ ի վեր հիւանդ էր, ըսաւ անոր. «Կ'ուզե՞ս առողջանալ»: Յիսուս ըսաւ անոր. «Ոտքի՛ ելի՛ր, ա՛ն մահի՞նդ ու քալէ՛»: Իսկոյն մարդը առողջացաւ, եւ անելով իր մահի՞նդ՝ կը քալէր» (Յհ 5.5-6, 8-9):
3. Երբեմն Աստուած մեր ուշադրութիւնը կ'ուղղէ որոշ ուղղութեամբ մինչ կը կիրարկենք գիտութեան խօսքը:
  - Ան կրնայ մեզի տալ անձին անունը կամ կրնանք որոշ «նպատակ մը զգալ մեր հոգիներուն մէջ» այդ յատուկ անձին նկատմամբ:

**III. ԲԺՇԿՈՒԹԻՒՆԸ ԵՒ ԻՄԱՍՏՈՒԹԵԱՆ ԽՕՍՔԸ**

**Ա. Կարեւոր է սպասել Աստուծոյ առաջնորդութեան:**

1. Իմաստութեան խօսքը գերբնական հաղորդում մըն է Աստուծոյ իմաստութեան, որ կը յայտնէ, թէ ինչպէս պէտք է յառաջանանք որոշ գործի մը մէջ, որ ազգու կերպով պիտի ծառայէ որոշ պէտքի մը:
2. Անիկա մեզի կու տայ իմաստութիւնը գիտնալու, թէ ինչ պիտի ընենք բնական կամ անբնական ձեւով մեր արդէն իսկ ստացած գիտութեամբ:
3. Անիկա կը յայտնէ, թէ ինչպէս պէտք է ծառայենք պէտքի մը, Աստուծոյ ծրագրին եւ նպատակին համաձայն:
  - ա. Կարեւոր է, որ ժամանակ տրամադրենք լսելու եւ հանչնալու Հայր Աստուծոյ կամքը, որպէսզի գիտնանք թէ, ով, երբ, ուր եւ ինչպէս կ'ուզէ Ան, որ ծառայենք պէտքի մը:
  - բ. «Ուստի Յիսուս ըսաւ անոնց. «Երբ բարձրացնէք մարդու Որդին, այն ատեն պիտի գիտնաք թէ ես եմ, եւ թէ ես ինձմէ ոչինչ կ'ընեմ, հապա կը խօսիմ այս բաները՝ ինչպէս Հայրը սորվեցուց ինձի» (Յհ 8.28):
  - գ. «Ձե՞ս հաւատար թէ ես Հօրը մէջն եմ, ու Հայրը իմ մէջն է: Այն խօսքերը՝ որ կ'ըսեմ ձեզի, եւ ինձմէ չեմ ըսեր. Հապա Հայրը՝ որ բնակած է իմ մէջս, անիկա կ'ընէ այդ գործերը» (Յհ 14.10):
4. Իմաստութեան խօսքին միջոցառ Յիսուս ոչ միայն կ'առաջնորդուէր դէպի յատուկ անձեր, ինչպէս պատահեցաւ Բերիեզգայի աւագանին մօտ, այլեւ՝ Ան մարդոց համար բժշկութեան ծառայութիւնը կատարեց շատ մը տարբեր ձեւերով:
  - ա. Ան ձեռք դրաւ անոնց վրայ:
  - բ. Ան Իր մատը դրաւ անոնց ախանջներուն մէջ:
  - գ. Ան թփեց եւ անոնց լեզուին դպաւ:
  - դ. Ան դուրս վտարեց ոզիներ:
  - ե. Ան նոյնիսկ բժշկեց միայն խօսելով:

Բ. Իմաստութեան խօսքը՝ Պօղոսի բժշկութեան ծառայութեան մէջ

1. Պօղոս եւս բժշկութեան ծառայութիւնը կատարեց բազմաթիւ ձեւերով՝ այնպէս ինչպէս կ'առաջնորդուէր կատարել գիտութեան խօսքով:
  - ա. Պօղոս բժշկութեան ծառայութիւնը կատարեց ձեռք դնելով ինչպէս նաեւ անոր թաշկիմակներն ու գոգնոցները կ'առնուէին իր ձեռքէն՝ հիւանդներուն վրայ դրուելու համար:
  - բ. Պօղոս մեռելներէն յարուցանեց երիտասարդ Եւտիմոսը անոր վրայ իյնալով եւ ողջագուրելով գայն:
2. Նախօրէին Պոպղիոսին հօր համար իր ծառայութիւնը կատարելը, Պօղոս աղօթեց (ըստ երեւոյթին բժշկութեան ծառայութիւնը կատարելու ձեւին վերաբերեալ իմաստութեան խօսք մը առնելու համար) եւ ապա ձեռք դնելով բժշկեց գայն:
  - «Պոպղիոսի հայրը կը պառկէր՝ տենդով ու թանջով հիւանդացած: Պօղոս մտաւ անոր բով, եւ աղօթելով՝ ձեռքերը դրաւ անոր վրայ ու բժշկեց գայն» (Գրծ 28.8):

Գ. Գիտութեան խօսքը ստանալ՝ բժշկութեան համար

1. Որոշ հիւանդներէն մը անձի մը բժշկութեան համար անհրաժեշտ գիտութիւնը կրնանք ունենալ կա՛մ բնականօրէն կամ ալ գերբնականօրէն՝ գիտութեան խօսքին միջոցաւ:
  - Այդ պահուն մենք պէտք է կանգ առնենք եւ ակնառջ տանք Հոգիին՝ տեսնելու համար, թէ Ան կ'ուզե՞ իմաստութեան խօսքի մը միջոցաւ մեզի տալ այդ անձին համար բժշկութեան ծառայութիւնը կիրարկելու ձեւին վերաբերեալ ցուցմունքները:
2. Իմաստութեան խօսքը յաճախ կու գայ իբրեւ գաղափար մը կամ տեսիլք մը, որուն միջոցաւ մենք մեր անձերը կը տեսնենք բժշկութեան կարիքը ունեցող անձին համար ծառայութիւնը որոշ ձեւով մը կատարելու ընթացքին մէջ:
  - Երբեմն Աստուած մեզի կու տայ խօսք մը, որ մեզ կ'առաջնորդէ որոշ ձեւով մը՝ մեր ծառայութիւնը ուղղելու համար հարցին արմատին՝ փոխանակ բացայայտ ախտահաններուն:

IV. ԲԺՇԿՈՒԹԻՒՆ ԵՒ ՀԱՒԱՏՔԻ ՊԱՐԳԵՒԸ

Ա. Յատուկ ժամանակի եւ նպատակի մը համար

1. Հաւատքի պարգեւը գերբնական հաւատք մըն է յատուկ ժամանակի եւ նպատակի համար:
2. Անիկա գորութեան պարգեւ մըն է՝ որոշ գործ մը իրականացնելու համար, ինչ կացութեան մէջ ալ որ ըլլաս այդ յատուկ ժամանակին:
  - ա. Երբեմն երբ ստեղծագործ հրաշքի մը կարիքը կը զգանք կամ երբ մեր ծառայութիւնը կը կիրարկենք անձի մը համար, որուն բժշկուելու կարիքը հաւատքի մէջ մեր ունեցած անէն աւելի բարձր մակարդակ կը պահանջէ, Աստուած մեզի յատուկ հաւատք մը պիտի տայ:
  - բ. Այնպէս որ, որքան ալ անկարելի թուի մարդոց համար, մենք անկասկած կը գիտնանք, որ այդ բուժման ամբողջական դրսեւորումը տեղի պիտի ունենայ:
3. Երբեմն մեզի կու գան մարդիկ, որոնց մարմիններուն որոշ անդամները գոյութիւն չունին՝ ի ծնէ ունեցած թերանութեան մը պատճառով կամ հատուած են՝ վիրահատութիւններու կամ արկածներու իբրեւ հետեւանք:
  - ա. Հաւանաբար մեր հաւատքը այնքան անած եղած չըլլար, որ կարենանք հաւատալ Աստուծոյ՝ պէտք եղած հրաշքին իրականացման համար:
  - բ. Սակայն իմաստութեան խօսքով մը մենք կրնանք տեսիլք մը ունենալ եւ մենք մեր անձերը տեսնել համարձակօրէն որոշ ձեւով ծառայութիւն մը կիրարկելու միջոցին, որուն ընթացքին ստեղծագործ հրաշքը կը կատարուի նախօրէին անոր իսկապէս պատահիլը:
4. Երբ մենք այդ իմաստութեան խօսքը կը ստանանք տեսիլքի մը միջոցաւ, հաւատքի պարգեւը կ'արձակուի եւ մենք առանց կասկածի կը գիտնանք, որ հրաշքը պիտի պատահի մեր ծառայութեան ընթացքին, այնպէս ինչպէս մեր հոգիին մէջ տեսած էինք անոր կատարուիլը:

Բ. Հաւատքի պարգեւը՝ գործի մէջ

1. Պետրոս եւ Յովնաննէս հաւատքի պարգեւը ստացան այն օրը երբ կադ մարդը տեսան տաճարին դրան մօտ:

2. «Պետրոս ըսաւ. “Արժար ու ոսկի չունիմ, հապա ինչ որ ունիմ՝ գայն կու տամ քեզի. Նազովրեցի Յիսուս Քրիստոսի անունով՝ ոտքի՛ ելիր ու քալէ՛”։ Եւ բռնելով անոր աջ ձեռքէն՝ ոտքի հանեց գայն։ Աննի՛ջապէս անոր ոտքերուն ներքաններն ու կոնքերը ամրացան, եւ վեր ցատկելով՝ կայնեցաւ, քալեց ու անոնց հետ տանար մտաւ, քալելով, ցատկելով եւ Աստուած գովաբանելով» (Գրծ 3.6-8):

## V. ԲԺՇԿՈՒԹԻՒՆ ԵՒ ՀՐԱՇԱԳՈՐԾՈՒԹԻՒՆ

### Ա. Գործընթացը

1. Իմաստութեան խօսք ստանալով, մենք հոգիով տեսանք, տեսիլքի մը կամ գաղափարի մը ձեւով, հրաւիր մը կատարուիլը նախքան մեր բժշկութեան ծառայութիւնը կիրարկելը անձի մը համար, որ պէտք ունի բժշկութեան ստեղծագործ հրաւիր մը:
2. Այդ պահուն մենք հաւատքի պարզելը ստացանք:
  - ա. Այլեւս պայքար չենք մղեր հաւատալու համար:
  - բ. Մենք արդէն առանց կասկածի գիտենք, թէ մինչ մենք համարձակօրէն բժշկութեան ծառայութիւնը կը կիրարկենք այդ անձին համար, այն ձեւով, որ արդէն տեսած ենք մեր հոգիով, այդ հրաւիրը պիտի պատահի:
3. Մենք կը սկսինք համարձակօրէն գործադրել ինչ որ արդէն իսկ հոգիով տեսած ենք, որ կ'ընենք:
  - Այդպիսով մենք կը կիրարկենք հրաւիրութեան պարզելը:

### Բ. Յիսուսի օրինակը

- «Ինք ալ ըսաւ ձեռքը չորցած մարդուն. “Ելի՛ր, կայնէ՛ մէջտեղը”... ապա ըսաւ այդ մարդուն. “Երկարէ՛ ձեռքդ”։ Ան ալ երկարեց, եւ անոր ձեռքը առողջացաւ» (Մր 3.3, 5):

## ԵԶՐԱԿԱՑՈՒԹԻՒՆ

Բժշկութեան պարզելները կիրարկելու համար ամէն հաւատացեալ պէտք է մարգուի եւ սկսի կիրարկել Սուրբ Հոգիին յայտնութեան եւ զօրութեան բոլոր պարզելները:

## ԽՄԲԱՅԻՆ ՔՆՆԱՐԿՈՒՄ

1. Խոնքերու բաժնուցէ՛ք եւ սորվեցէ՛ք Սուրբ Հոգիին պարզելները կիրարկելու ձեւը, արձակելով գիտութեան խօսքը, իմաստութեան խօսքը եւ հաւատքի պարզելը՝ բժշկութեան եւ հրաւիրութեան պարզելներուն կիրարկման մէջ:
2. Այդ ծառայութիւնները կատարեցէ՛ք իրարու եւ ասկէ ետք, ձեր ծառայութեան ընթացքին ձեր ապրած կացութիւններուն մէջ, զգացողութի՛ւն ունեցէ՛ք Սուրբ Հոգիին նկատմամբ եւ արտօնեցէ՛ք Անոր, որ ձեր միջոցաւ արձակէ Իր պարզելները:

## ԻՆՔՆԱՇԽԱՏՈՒԹԻՒՆ

1. Կը կարծե՞ս, թէ ուե՛լ ծառայող բժշկութեան պարզելները ունի: Արդեօք ան պարզապէս միջո՞ց մըն է այդ պարզելները արձակելու:
2. Ի՞նչ վերաբերում, քու կողմէդ, հրամայական է Սուրբ Հոգիին պարզելներուն կիրարկման համար:
3. Գրէ՛ քու դասընթացքի խոնքիդ կամ ծառայութեանդ ընթացքին գիտութեան խօսքը, իմաստութեան խօսքը ինչպէս նաեւ հաւատքի, բժշկութեան եւ հրաւիրութեան պարզելները կիրարկելու ընթացքին քու անձնական տպաւորութեանդ կամ զգացումներուդ մասին:

# ԳԵՆԲՆԱԿԱՆ ԿԵԱՆՔ

## ԵՕԹՆԵՐՈՐԴ ՊԱՀ

### Բժշկությունը և Մեծ Յանձնարարությունը

#### ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆ

Այս պահուն պիտի խօսինք Մեծ Յանձնարարության և բժշկության մասին:

#### ԴԱՍԻ ՆԱԽԱԳԻԾ

### I. ՄԵԾ ԾԱՆՁՆԱՐԱՐՈՒԹԻՒՆԸ Կ'ԸՆԴԳԻԿԵ ԲԺՇԿՈՒԹԻՒՆ (ՄԲ 16.15-20)

#### Ա. Մեծ Յանձնարարության սահմանումը

- Մինչ Յիսուս կը պատրաստուէր հեռանալ աշխարհէն՝ Իր Հօրը միանալու համար, Ան Ձիթենեաց Լէռը հաւաքեց Իրեն հաւատացողները և վերջին ուսուցումները տուաւ անոնց: Այդ մէկը կը կոչենք «Մեծ Յանձնարարականը»:

#### Բ. Մեծ Յանձնարարականը ամէն հաւատացեալի համար

1. Այդ յանձնարարականը միայն առաջին ժամանակներու առաքելներուն համար չէր: Անիկա տրուած չէր միայն անոնց, որոնք պիտի գործէին հինգ ծառայութիւններուն մէջ իբրեւ՝ առաքելներ, մարգարէներ, հովիւներ, ուսուցիչներ կամ աւետարանիչներ:
2. Յիսուսի յանձնարարածը շատ յստակ էր:
  - ա. Անիկա տրուեցաւ անոնց, որոնք կը հաւատային:
  - բ. Այս մեծ յանձնարարականը իրաւանչիւր հաւատացեալի համար է այսօր:

#### Գ. Մեծ յանձնարարականը ուղղուած է ամէն արարածի

1. Իրաւանչիւր հաւատացեալ պէտք է համարձակօրէն հարգէ Աւետարանը ամէն արարածի: Յիսուս ըսաւ՝ «Այս արքայութեան աւետարանը պիտի հարգուի ամբողջ երկրագունդին մէջ՝ իբր վկայութիւն բոլոր ազգերուն, և ա՛յն ատեն վախճանը պիտի գայ» (Մտ 24.14):
2. «Քարոզել» կը նշանակէ՝ հոչակել Աւետարանը կամ բաժնեկցիլ զայն ամէն մարդու հետ, ըլլայ անիկա մեծ խումբերու մէջ կամ ինչպէս Փիլիպպոս ըրաւ երբ ան նստաւ երովպիացի ներքինիին մօտ կառփին մէջ:

#### Դ. Նշաններ կը հետեւին անոնց, որոնք կը հաւատան:

1. Յիսուս ուր որ գնաց, դուրս վտարեց դէտեր և բժշկութեան ծառայութիւնը կիրարկեց հիւանդներուն:
  - ա. Այժմ Ան բոլոր Իրեն հաւատացողներուն կը յանձնարարէ, որ նոյնը ընեն:
  - բ. Անոնք, որոնք կը հաւատան, պէտք է դէտեր դուրս վտարեն և նոր լեզուներ խօսին...
2. Յիսուս չըսաւ, թէ այդ նշանները պիտի հետեւին անոնց, որոնք կը կասկածին թէ այդ նշանները իսկապէս իրենց ձեռքով կրնան կատարուիլ թէ ոչ:
  - ա. Ան չըսաւ, թէ այդ նշանները պիտի հետեւին անոնց, որոնք կը յուսան, թէ պիտի կատարուին:
  - բ. Ան ըսաւ, թէ այդ նշանները պիտի հետեւին միայն անոնց, որոնք կը հաւատան, թէ պիտի կատարուին:
3. Վստահող հաւատքը պիտի աճի մեր հոգիներուն մէջ մինչ Աստուած այդ բառերը յայտնութեան անձնական բառերու կը վերածէ մեզի համար:

ա. Եթէ մենք՝ իբրեւ հոգիով լեցուած հաւատացեալներ, իսկապէս հաւատանք Յիսուսի այդ բառերուն, նշանները պիտի հետեւին մեզի:

բ. Այն ատեն անոնք Յիսուսի վերջին տասնեակ մը բառերն էին, ըստ Մարկոսի աւետարանին: Անոնք Յիսուսի վերջին ուսուցումն էին նախքան Անոր Իր Հօրը բով բարձրանալը: Անոնք էին Յիսուսի ամէնէն կարեւոր ուսուցումը, որ Ան ուզեց, որ շարունակ հնչէր ականջներուն մէջ «անոնց, որոնք կը հաւատան»:

● «...Ձեռք պիտի դնեն հիւանդներու վրայ, եւ անոնք պիտի առողջանան» (Մր 16.18):

Ե. Խօսքը հաստատել նշաններով

1. «Իսկ անոնք գացին եւ կը փարոզէին ամէնուրեք: Տէրը անոնց գործակից էր, ու կը հաստատէր խօսքը՝ ընկերացոյ նշաններով: Ամէն» (Մր 16.20):

2. Նշաններ պէտք է հետեւին իւրաքանչիւր հաւատացեալի մինչ կը փարոզէ կամ կը բաժնեկցի Աւետարանը:

● Մեզի հետեւող կարեւորագոյն նշաններէն մէկը, մինչ մենք կ'ապրինք մեր առօրեայ կեանքը եւ կը կատարենք մեր ծառայութիւնը՝ իբրեւ հաւատացեալներ այն է, որ մենք ձեռք պիտի դնենք հիւանդներու վրայ:

3. Երբ այդ մէկը կ'ընենք, Յիսուս հոն պիտի ըլլայ մեզի հետ աշխատելու եւ Իր Խօսքը հաստատելու համար կորսուածներուն՝ նշաններով, սփանչելիքներով եւ բժշկութեան հրաշքներով, որոնք պէտք է հետեւին իւրաքանչիւր Յիսուս Քրիստոսի հաւատացողի:

## II. ՅԻՍՈՒՍԻ ԲԺՇԿՈՒԹԵԱՆ ԱՌԱՔԵԼՈՒԹԻՒՆԸ

Ա. Իր երկրաւոր առաքելութեան ընթացքին Յիսուս ուր որ գնաց, այդ նշանները հետեւեցան Իրեն.

1. «Յիսուս կը շրջէր բոլոր քաղաքներն ու գիւղերը, կը սարկեցնէր անոնց ժողովարաններուն մէջ, կը փարոզէր արքայութեան աւետարանը, եւ կը բուժէր բոլոր շիտերն ու բոլոր վատառողջութիւնները ժողովուրդին մէջ» (Մտ 9.35):

2. «Տէրոջ Հոգին վրաս է. որովհետեւ օծեց զիս աղբասներուն աւետարանելու, որպէս զիս կոտրած սիրտ ունեցողները բժշկելու, գերիներուն՝ ազատ արձակում եւ կոյրերուն տեսողութիւն յայտարարելու, հարստահարութիւն կրողները ազատ արձակելու, Տէրոջ բարեհաճութեան տարին յայտարարելու» (Ղկ 4.18-19):

Բ. Յիսուս է մեր տիպար օրինակը

1. Յիսուս ըսաւ՝ «Ճշմարտապէս, ճշմարտապէս կը յայտարարեմ ձեզի. Ա՛ն որ կը հաւատայ ինձի, ի՛նքն ալ պիտի ընէ այն գործերը՝ որ ես կ'ընեմ, եւ անոնցմէ աւելի՛ մեծ գործեր պիտի ընէ, որովհետեւ ես կ'երթամ Հօրս բով» (Յհ 14.12):

2. Շատեր այս խօսքերը կարդացեր են եւ մտածեր, թէ՛ «Ի՞նչպէս կարելի է, որ մենք կարենանք Յիսուսի կատարած գործերը կատարել: Ի՞նչպէս կրնայ Յիսուս մեր տիպար օրինակը ըլլալ եւ ակնկալել, որ մենք ալ նոյն գործերը ընենք: Վերջապէս Ան յաւիտենական, ամենագոր Աստուծոյ Որդի էր»:

Գ. Յիսուս ժամանակաւորապէս ինքզինք մերկացուց Իր աստուածային իրաւունքներէն:

1. Կարեւոր է հասկնալ, թէ երբ Յիսուս աշխարհ եկաւ, Ան եկաւ իբրեւ «Վերջին Ադամը»:

● Ան տակաւին իսկապէս Աստուած էր, բայց Ան ժամանակաւորապէս ինքզինք մերկացուց Իր աստուածային իրաւունքներէն եւ եկաւ իբրեւ մարդ:

2. Իբրեւ Աստուած՝ Ան ամենուրեք էր (ներկայ՝ ամէն տեղ միեւնոյն ատեն): Սակայն իբրեւ մարդ՝ Ան կրնար միայն մէկ տեղ ըլլալ տուեալ ժամանակի մը:

ա. Իբրև Աստուած՝ Ան ամենագէտ էր (ամէն բան գիտէր): Սակայն իբրև մարդ՝ երբ արիւնահոսութիւն ունեցող կիւնը դպաւ Իրեն, Ան հարցուց՝ «Ո՞վ դպաւ ինձի», եւ չորս կողմ նայեցաւ տեսնելու համար, թէ ով էր:

բ. Իբրև Աստուած՝ Ան ամենագոր էր: Սակայն իբրև մարդ՝ ոչ մէկ հրաժեք արձանագրուած է Անոր կեանքի առաջին երեսուն տարիներուն ընթացքին:

3. Սակայն երբ Յիսուս մկրտուեցաւ Յորդանանի գետին մէջ եւ Սուրբ Հոգին զօրութեամբ հանգչեցաւ Անոր վրայ, հրաժեքներ սկսան տեղի ունենալ Իր գացած բոլոր վայրերուն մէջ:

ա. Յիսուս եւս գործեց այնպէս ինչպէս մեզմէ կ'ակնկալուի գործել՝ Սուրբ Հոգիին զօրութեամբ:

բ. Յիսուս գերբնական ձեւով կը գիտնար բաներ, այնպէս ինչպէս մենք պէտք է գիտնանք՝ Սուրբ Հոգիին յայտնութեան պարգեւներուն միջոցաւ:

Դ. Եթէ Յիսուս կրնար ընել այդ մէկը, մենք ալ կրնանք:

1. Յիսուս մեր տիպար օրինակը ըլլալու միակ արժանիքն է:

ա. Ան Իր առաքելութիւնը չիրագործեց իբրև Աստուծոյ Որդի վայելած Իր ուժովը:

բ. Ան Իր առաքելութիւնը կատարեց իբրև աշխարհի վրայ ապրող մարդ՝ Սուրբ Հոգիին պարգեւներով:

2. Հետեւաբար մենք կրնանք համարձակօրէն ըսել՝ «Եթէ Յիսուս կրցաւ ընել, մենք ալ կրնանք ընել: Մենք կրնանք եւ պիտի կատարենք Անոր գերբնական գործերը այս աշխարհի վրայ»:

• Յիշեցէ՛ք, որ Յիսուս ըսաւ, թէ՛ «Ա՛ն որ կը հաւատայ ինձի, ի՛նք ալ պիտի ընէ այն գործերը՝ որ եւս կ'ընեն...» (Յհ 14.12):

Ե. Յիսուսի կարեկցութիւնը կարսուածներուն նկատմամբ (Մտ 9.36-38)

1. Յիսուս չ'ուզեր որ ոեւէ մէկը կարուստի մատնուի: Ամէն մարդ պէտք է լսէ Անոր փրկութեան աւետիսը:

2. Ան ընարեց այդ մէկը առանձին չընել այլեւ՝ բազմապատկել Ինքզինք մեր կեանքներուն մէջ:

### III. ՅԱՆՁՆԱՐԱՐՈՒԻՂԸ

Ա. Սկսաւ տասներկուօր

1. Յիսուս սկսաւ աշխատանքներ դրկել դէպի Իր հունձքի դաշտերը՝ նախ դրկելով Իր տասներկու առակերտները:

2. Ան ցուցմունքներ տուաւ անոնց երթալու եւ ընելու ճիշդ այն գործը, որ Ինք կ'ընէր (Մտ 10.1, 7-8):

Բ. Ապա՝ եօթանասունը (Ղկ 10.1, 9)

1. Երբ բժշկութեան ծառայութիւնը կը կիրարկենք հիւանդներու համար, մենք Աստուծոյ Արքայութիւնը աշխարհ կը բերենք՝ մարդոց:

2. Յիսուս Ինքզինք բազմապատկեց տասներկուօրին եւ ապա եօթանասունին մէջ: Անոնք զրկուեցան ֆարոգելու Արքայութեան Աւետարանը: Անոնք զրկուեցան ընելու ճիշդ այն գործերը, զորս Ինք կ'ընէր:

Գ. Այժմ՝ բոլոր հաւատացեալները

1. Յիսուսի գործը այս աշխարհին վրայ աւարտած էր. Ան կը ձգէր աշխարհը, բայց Իր գործերը պիտի չաւարտէին: Անոնք նո՛ր կը սկսէին:

• Ան Ինքզինք եւ Իր առաքելութիւնը բազմապատկեց բոլոր հաւատացեալներուն կեանքներուն մէջ:

2. Բոլոր հաւատացեալները պէտք է ամբողջ աշխարհ երթան եւ Աւետարանը ֆարոգեն:

• Բոլոր հաւատացեալները պէտք է դէւեր վտարեն, նոր լեզուներով խօսին եւ իրենց ձեռքերը հիւանդներու վրայ դնելով առողջացնեն զանոնք:

3. Իբրև հաւատացեալներ՝ Պետրոս եւ Յովհաննէս կադ մարդուն ձեռքէն բռնեցին, ըսելով՝ «Նագովրեցի Յիսուս Քրիստոսի անունով՝ ոտքի՛ ելիր ու քալէ՛»։ Մարդը քալելով հեռացաւ, ցատկելով եւ գԱստուած վառաւորելով, եւ Եկեղեցին անելով՝ հինգ հազար հոգի եղաւ այդ օր (Գրծ 3.6-8, 4.4):
4. Փիլիպպոս՝ հաւատացեալ մը, որ սարկաւագ մըն էր Երուսաղէմի եկեղեցիին մէջ, Սամարիա գնաց եւ Քրիստոսը քարոզեց անոնց։
  - «Եւ բազմաթիւնը՝ միաբան՝ ուշադիր էր Փիլիպպոսի ըսածներուն, լսելով ու տեսնելով անոր ըրած նշանները։ Որովհետեւ անմահուր ոգիներ բարձրաձայն գոռալով դուրս կ'ելլէին բազմաթիւ դիւահարներէ, եւ շատ անդամալոյծներ ու կաղեր կը բուժուէին։ Ուստի մեծ ուրախութիւն եղաւ այդ քաղաքին մէջ» (Գրծ 8.6-9):
5. Պօղոս գնաց Եփեսոս եւ Աւետարանը կը քարոզէր, եւ «Աստուած արտասովոր հրաշքներ կը գործէր Պօղոսի ձեռքով. մինչեւ իսկ անոր մարմինէն թաշկիւնակներ ու գոգնոցներ կը տարուէին հիւանդներուն, որոնք կ'ազատէին իրենց ախտերէն ու չար ոգիները դուրս կ'ելլէին» (Գրծ 19.11-12):
6. Իբրև արդիւնք՝ բոլոր Ասիոյ մէջ բնակողները լսեցին Տէր Յիսուսի Խօսքը, թէ՛ հրեաները եւ թէ՛ յոյները (Գրծ 19.10):
7. Այսօր Աստուած առաքեալներ, մարգարէներ, աւետարանիչներ, հովիւներ եւ ուսուցիչներ կը վերահաստատէ՝ առաքելութեան գործը կատարող սուրբեր պատրաստելու համար։
  - ա. Առաքելութեան գործը բոլոր սուրբերուն համար է։
  - բ. Այսօր բոլոր հաւատացեալները միասնաբար կը կազմեն հզօր բանակ մը՝ մարգուած եւ սպառազինուած հրաշագործ աւետարանչութեան համար։
8. Մինչ իւրաքանչիւր հաւատացեալ կը շարունակէ Աւետարանը քարոզել ամէն արարածի, մենք կրնանք եւ պիտի հասցնենք Յիսուս Քրիստոսի Աւետարանը մեր քաղաքներուն, ազգերուն եւ մեր աշխարհին նախօրէին Անոր վաղահաս վերադարձը։

## ԽՄԲԱՅԻՆ ՔՆՆԱՐԿՈՒՄ

1. Ի՞նչ կապ ունի հիւանդներ բուժելը Մեծ Յանձնարարութեան հետ։
2. Ի՞նչպէս կարելի է, որ հաւատացեալներ ընեն այն գործերը, զորս Յիսուս կ'ընէր։
3. Այսօր հաւատացեալներ ի՞նչ պէտք է ընեն, որպէսզի Մր 16.15-20ի նշանները հետեւին իրենց։
4. Աղօթեցէ՛ք իրարու համար։

## ԻՆՔՆԱՇՆԱՏՈՒԹԻՒՆ

1. Սերտէ՛ Մր 16.15-20ը եւ ցանկագրէ՛ անոր մէջ նշուած հրահանգներն ու խոստումները։
  - ա. Հրահանգներ
  - բ. Խոստումներ
2. Ո՞վ է, որ պիտի գործադրէ այդ հրահանգները եւ տիրանայ խոստումներուն։
3. Արդեօք կը գործադրե՞ս այդ հրահանգները եւ կը տիրանա՞ս այդ խոստումներուն ծառայութեանը ընթացքին։
4. Աղօթէ՛ պատասխանիդ մասին։

**ԳԵՐԲՆԱԿԱՆ ԿԵԱՆՔ**  
**ՈՒԹԵՐՈՐԴ ՊԱՀ**  
**Աստուծոյ Բուժիչ Զօրութիւնը**

**ԾԱՆՕԹՈՒԹԻՒՒՆ**

Այս պահուն ընթացքին պիտի խօսինք Աստուծոյ բուժիչ զօրութեան մասին:

Ա.Կր 2.4ին մէջ Պօղոս կը գրէ. «Եւ իմ խօսքս ու քարոզութիւնս՝ ո՛չ թէ մարդկային իմաստութեան հանգիչ խօսքերով էին, հապա՛ Հոգիին եւ զօրութեան ապացոյցով»:

Կը հաւատա՞ս Աստուծոյ բուժիչ զօրութեան: Կը հաւատա՞ս Աստուծոյ զօրութեան ցուցադրութեան: Պօղոս ըսաւ, թէ իր առաքելութեան մէջ արձանագրած իր յաջողութիւնները իր աստուածաբանական մեծ գիտութեան պատճառով չէին, այլ՝ Հոգիին միջոցաւ Աստուծոյ զօրութեան ցուցադրութեամբ: Պատրա՞ստ ես Աստուծոյ զօրութեան ցուցադրութեան մը:

**ԴԱՍԻ ՆԱԽԱԳԻԾ**

**I. ԲՈՒԺԻՉ ԶՕՐՈՒԹԻՒՆԸ՝ ՅԻՍՈՒՍԻ ՄԷՋ (ՄԲ 5.25-34)**

Ա. Ուժանակի զօրութիւնը

1. Մր 5.30ին մէջ գործածուած «զօրութիւն» բառը յունարէն բնագիրին մէջ «տունամիս» (dunamis) է:
  - ա. Անիկա նոյն արմատն է, որմէ կու գան «ուժաբանական», «ուժամեֆենայ» կամ «ուժանակ» բառերը:
  - բ. Յունարէնի մէջ անիկա ամէնէն նկարագրական բառն է պայքուցիկ զօրութիւն բացատրութեան:
2. Ղկ 4.14ին մէջ նոյն այդ յունարէն բառը կը գործածուի Յիսուսի մասին Յորդանան գետին մէջ Սուրբ Հոգին Անոր վրայ գալէն ետք:
  - «Յիսուս Հոգիին զօրութեամբ («տունամիս». dunamis) վերադարձաւ Գալիլիա...» (Ղկ 4.14):
3. Երբ Սուրբ Հոգին հանգչեցաւ Յիսուսի վրայ, Ան լեցուեցաւ Աստուծոյ «տունամիս» (dunamis) զօրութեամբ:
  - Ան վերածուեցաւ քաղցր ուժանակի մը:
4. «Ու Յովհաննէս վկայելով ըսաւ. «Տեսայ Հոգին, որ աղանիւի պէս կ'իջնէր երկինքէն եւ կը մնար անոր վրայ»» (Յհ 1.32):

Բ. Հիւանդները բուժելու զօրութիւն

1. Սուրբ Հոգիին զօրութիւնը, որ Յիսուսի մէջ կը գտնուէր, հիւանդները բժշկելու զօրութիւնն էր:
  - ա. Օր մը երբ Յիսուս կ'ուսուցանէր, շատեր, ներառեալ՝ կրօնական ղեկավարներ, եկած էին Գալիլիայէն, Յուդայէն եւ Երուսաղէմէն:

բ. Ղուկաս կը գրէ. «...եւ Տէրոջ զօրութիւնը ներկայ էր բժշկելու համար» (Ղկ 5.17):

2. Յաջորդ գլուխին մէջ կը կարդանք՝ «Ամբողջ բազմութիւնը կը ջանար դաշիլ իրեն, որովհետեւ զօրութիւն («տունամիս» **dunamis**) կ'ելլէր իրմէ ու բուրբ կը բժշկէր» (Ղկ 6.19):

## II. ՈՒԺԱՆԱԿԻ ԶՕՐՈՒԹԻՒՆԸ՝ ՊՕՂՈՍԻ ՄԷՋ

Ա. «Աստուած արտասովոր հրաշքներ կը գործէր Պօղոսի ձեռքով. մինչեւ իսկ անոր մարմինէն թաշկինակներ ու գոգնոցներ կը տարուէին հիւանդներուն, որոնք կ'ազատէին իրենց ախտերէն ու չար ոգիները դուրս կ'ելլէին» (Գրծ 19.11-12):

1. Յիսուսի մէջ գտնուող նոյն այդ ուժանակի բուժիչ զօրութիւնը նաեւ կը հոսէր Պօղոսի ձեռքերէն:
2. Աստուծոյ բուժիչ զօրութիւնը այնքան իրական է հզօր է, որ փոխանցուած էր կտոր մը լաթի վրայ եւ հեռաւոր երկիր մը տարուելով, հիւանդի մը մարմինին վրայ դրուելով, անմիջապէս բուժած էր ազատած էր գայն:

Բ. Բուժիչ զօրութիւնը իրական էր շօշափելի է:

1. Աստուծոյ զօրութիւնը, որ Յիսուսի մէջ գոյութիւն ունէր այնքան իրական էր շօշափելի էր, որ Ան անոր Իրմէ հոսիլը զգաց դէպի արիւնահոսութիւն ունեցող կիներ:  
ա. Նոյնիսկ երբ Ան Յայրուսին աղջիկը մեռելներէն յարուցանելու համբուն վրայ էր, Ան անմիջապէս կանգ առաւ ու ըսաւ՝ «Ո՞վ դպար ինծի»:  
բ. Ան զգացած էր այդ ուժանակի զօրութեան Իր մարմինէն հոսիլը:
2. Պօղոս առաքելին մէջ գտնուող բուժիչ զօրութիւնը այնքան իրական էր հզօր էր, որ անիկա լաթի կտորի մը միջոցաւ կարելի էր փոխանցել հիւանդներու՝ բուժում եւ ազատում բերելու համար անոնց:

Գ. Ինծի հետ ի՞նչ գործ ունի այդ մէկը:

1. Շատեր կը մտածեն՝ «Այո, գիտեմ, որ այդ զօրութիւնը Յիսուսի մէջ կար: Գիտեմ, որ այդ զօրութիւնը Պօղոս մեծ առաքելին մէջ կար: Բայց այդ մէկը ի՞նչ կապ ունի ինծի հետ: Ես պարզապէս սովորական հաւատացեալ մըն եմ»:
2. Յիսուս ըսաւ՝ «Բայց Սուրբ Հոգիին ձեր վրայ եկած ատենը՝ զօրութիւն պիտի ստանաք, եւ ինծի համար վկաներ պիտի ըլլաք Երուսաղէմի մէջ, ամբողջ Հրէաստանի ու Սամարիայի մէջ, եւ մինչեւ երկրի ծայրերը» (Գրծ 1.8):  
ա. Այս համարին մէջ գործածուած զօրութիւն բարձր «տունամիս» (**dunamis**) (ուժանակ) բառն է:  
բ. Յիսուս կ'ըսէր, թէ երբ մենք Սուրբ Հոգիին մկրտութիւնը կը ստանանք, կը ստանանք նաեւ ճիշդ այն զօրութիւնը, որ Յիսուսէն հոսեցաւ արիւնահոսութիւն ունեցող կնոջ:
3. Մենք մեր մէջ ունինք ճիշդ այն զօրութիւնը, որ Սուրբ Հոգիով լեցուած հաւատացեալներ ունէին, ինչպէս Պօղոսը ունէր իր մարմինին մէջ, երբ անոր թաշկինակներն ու գոգնոցները կը տարուէին՝ հիւանդներու վրայ դրուելու համար:
4. Մենք՝ իբրեւ հոգիով լեցուած հաւատացեալներ, մէկական ուժանակներ ենք...

## III. ՀԱԻՍՏՔԸ՝ ՀՈՍԱՆՔԻ ԲԱՆԱԿԻՆ

Ա. Բա՛ց հոսանքը

1. Շատեր հարց տուած են թէ՛ «Եթէ այդ ամբողջ ուժը ունիմ ներսիցիս, ինչո՞ւ յաւելեալ մարդոց բուժման ականատես չեմ ըլլար: Ինչո՞ւ յաւելեալ հրաշքներ չեմ տեսներ կեանքիս մէջ»:
2. Ժիշդ այնպէս ինչպէս կարելի է նստիլ ամբողջական մթութեան մէջ սենեակի մը մէջ, որ ունի ուժեղ լուսաւորման հսկայ սարքաւորում, նոյնպէս ալ այսօր շատեր կը նստին մթութեան մէջ՝ տեղեակ չըլլալով իրենց մէջ գտնուող ուժեղ լուսաւորումէն (զօրութենէն):

ա. Մարդ պիտք է պարզապէս բանայ լոյսի հոսանքը եւ արտօնէ անոր հոսքը:

բ. Հաւատքն է այդ հոսանքին բանալին:

3. Յիսուս արիւնահոսութենէն բուժուած կնոջ ըսաւ՝ «Աղջի՛կ, հաւատքդ բժշկեց քեզ»:

● Աստուծոյ բուժիչ զօրութիւնը ստանալու եւ անոր հոսանքը արձակելու բանալին հաւատքն է:

#### Բ. Արիւնահոսութիւն ունեցող կինը

1. Վերադառնալով արիւնահոսութիւն ունեցող կնոջ պատմութեան, ինչպէս նշուած է Մարկոս աւետարանին 5րդ գլուխին մէջ, եւ տեսնենք, թէ բժշկուելու հաւատքը ի՛նչպէս ներգործեց անոր հոգիին մէջ:

ա. Այդ կինը արիւնահոսութենէ կը տառապէր տասներկու երկար տարիներէ ի վեր:

բ. Հին Կտակարանի օրէնքին համաձայն, ան «անմաքուր կին» մըն էր:

գ. Ան պէտք էր բաժնուէր իր ընտանիքէն եւ բարեկամներէն:

դ. Եթէ կրօնական ղեկավարներէն մէկուն կողմէ տեսնուէր հանրութեան մէջ, ան պէտք էր մինչեւ մահ ֆարկոծուէր:

2. Նոյնիսկ եթէ բժիշկներէն մէկը կարենար կասեցնել արիւնահոսութիւնը, ան չէր կրնար հանրութեան մէջ գտնուիլ մինչեւ տաճար չերթար եւ մաքրութեան արարողութիւնը չկատարէր:

● Ան միեակ էր եւ յուսահատ:

3. Այդ կինը իր ամբողջ դրամը մսխած էր շատ մը բժիշկներու մօտ ընդունած բուժումներու վրայ:

ա. Իւրաքանչիւր անգամ անոր յոյսը կոտրած էր:

բ. «Շատ չարչարանք կրած էր բազմաթիւ բժիշկներէ, եւ իր ամբողջ ունեցածը ծախսած էր բայց բնա՛ւ չէր օգտուած, այլ փոխարէնը վիճակը կը վատթարանար» (Մր 5.26):

4. Այժմ արդէն անոր դրամը ծախսուած էր եւ նոյնիսկ եթէ մասնագէտ մը ըլլար, որ կարենար օգնել իրեն, ան դրամը չունէր բուժուելու:

ա. Ան յուսահատութենէ կը մահանար: Ան վիճակը չէր բարելաւուէր, այլ՝ աւելի կը վատթարանար:

բ. Մինչ ան օրէ օր կը սկսանար՝ գիտնալով, որ կամաց-կամաց կը մահանար, այնպէս կը թուէր, որ ամէն յոյս կորսուած էր:

#### Գ. Հաւատքը եկաւ Խօսքը լսելէն:

1. Օր մը երբ ան երկնցած էր իր անօգնական յուսալքութեան մէջ, ան լսեց Յիսուսի մասին:

ա. «Երբ լսեց Յիսուսի մասին, ետեւէն եկաւ՝ բազմութեան մէջ, ու դպաւ անոր հանդերձին» (Մր 5.27):

բ. Ուժեղ բան մը պատահեցաւ երբ ան խօսքերը լսեց:

գ. «Ուրեմն հաւատքը կու գայ լսելէն, ու լսելը՝ Աստուծոյ խօսքէն» (Հն 10.17):

2. Այս համարին մէջ «խօսք» բառին յունարէնը «բէմա» (**rhema**) է: Ասիկա ընդհանուր իմաստով Աստուծոյ «Բան»ը կամ «Լոկոս»ը (**Logos**) չէ. այս համարին մէջ կը յստակացուի, թէ հաւատքը կու գայ Աստուծոյ «բէմա» (**rhema**) լսելէն:

3. «Բէմա» (**rhema**) իմաստով գործածուած «խօսք» բառը ուղղակի մեր հոգիներուն մէջ յայտնութեան ձեւով Աստուծոյ կողմէ խօսուած անձնական խօսք մըն է:

ա. Սուրբ Հոգին Խօսքը կենդանի կը դարձնէ անձնապէս մեզի:

բ. Յանկարծ հեռարտութեան անդրադարձ մը տեղի կ'ունենայ, եւ կարծես լոյսի հոսանքը նոր բացուած կ'ըլլայ:

գ. Կրնանք բացատրել «Օ՛, Աստուած նոր համար մը դրաւ իմ Աստուածաշունչիս մէջ: Բնաւ այդ ձեւով չէի հասկցած գանիկա: Ա՛յս է պատասխանս...»:

#### IV. ԳՈՐԾԻ ԼԾՈՒԱԾ ՀԱԻԱՏՔ

Ա. Երբ արևմտահայերենում ունեցող կիրքը լսեց Յիսուսի մասին, ան իր անձնական «րեմա» (rhema) խօսքը ստացաւ Աստուծոյ:

1. Հաւատքը ցատկեղ անոր հոգիին մէջ եւ ան գործի լծուեցաւ:
2. Յակոբոս ըսաւ՝ «... հաւատքը մեռած է առանց գործերու (համապատասխան ֆայլերու)» (Յկ 2.20):
3. Մինչ այդ կիրքը դուրս կու գար իր տան դռնէն, հաւանաբար անոր ընտանիքը փորձեց կեցընել զինք, ըսելով՝ «Վա՛ն, վերադարձի՛ր անկողին եւ ուժդ խնայէ՛: Չե՞ս գիտեր, որ պիտի մահանաս: Կրնաս ֆարկոծուիլ եթէ կրօնական դեկավարներէն մէկը տեսնէ քեզ...»:

ա. Երբ հաւատքը ներգործէ, կը գիտնանք, որ պիտի բուժուինք:

բ. Երբ հաւատքը ներգործէ, ոչինչ կը կատարուի մեր երթը, ինչպէս այդ կնոջ հետ պատահեցաւ:

4. Նոյնիսկ իր տկարացած վիճակին մէջ, ան հրմուտեց իր անհոգեցեալ բազմութիւնը եւ ետեւի կողմէն հասաւ Յիսուսին:

ա. Յանկարծ ան պէտք է անդրադարձած ըլլայ, որ Յիսուսին հետ եղող մարդը Յայրոսն էր՝ հրէական ժողովարանին իշխաններէն մէկը:

բ. Սակայն գիտնալով նոյնիսկ, որ կրնայ ֆարկոծուիլ, ան կանգ չառաւ: Ան ձեռքը երկարեց եւ դպաւ անոր հանդերձին:

Բ. Հաւատքը հաւատքով լեցուն բառեր կը խօսի:

1. Եթէ հաւատք կայ, ուրեմն ան կը խօսի: Պօղոս գրեց՝ «... հաւատքէն եկող արդարութիւնը սա՛ կ'ըսէ...» (Հո 10.6):
2. Այդ կնոջ հարցը չէր որ կը խօսէր: Անոր հաւատքը կը խօսէր: Ան համարձակօրէն յայտարարեց՝ «Եթէ միայն անոր հանդերձներուն դաշխմ' պիտի բուժուիմ» (Մր 5.28):

Գ. Հաւատքը տուեալ պահուն համար է:

1. Հաւատքը տուեալ պահուն համար Եբր 11.1ին մէջ սահմանուածն է:
  - «Իսկ հաւատքը՝ յուսացուած բաներուն խարխիսն է, եւ անտեսանելի բաներուն ապացոյցը» (Եբր 11.1):
2. Այդ կիրքը գիտէր, թէ այն պահուն, որ պիտի դաշէր Անոր, պիտի առողջանար:
  - ա. Այն պահուն, որ այդ կիրքը դպաւ Յիսուսի հանդերձներուն ոչ մէկ արգելք ֆանչցող հաւատքով մը, հաւատքով մը, որ համարձակ ֆայլեր կը նետէր եւ հաւատքով լեցուն բառեր կը խօսէր, Յիսուսի մէջ գտնուող ուժանակի զօրութիւնը մեծ ալիքի մը պէս հոսեցաւ անոր մարմինին մէջ:
  - բ. Ան անմիջապէս բուժուեցաւ:
  - գ. Յիսուս քաջագանչեց՝ «Աղջի՛կ, հաւատքդ բժշկեց քեզ. գնա՛ խաղաղութեամբ ու բժշկուա՛ծ եղիւր քու տանջանքդ» (Մր 5.34):
3. Երբ հաւատքը կը ներգործէ, մեր յուսացած բաները իրականութիւն կ'ըլլան:

Դ. Հաւատքը կ'արձակէ բուժիչ զօրութեան հոսանքը:

- Յիսուս ըսաւ՝ «Մ'ն որ հաւատայ ինձի, կենարար ջուրի գետեր պիտի բխին անոր փորէն, ինչպէս Գիլգալ կ'ըսէ՛»: Ասիկա ըսաւ Հոգիին մասին...» (Յհ 7.38-39):

Մենք՝ իբրև Աստուծոյ ուժանակի զօրութեամբ լեցուն հաւատացեալներ, պէտք է Յիսուսին հնազանդինք: Մենք պէտք է մեր ձեռքերը դնենք հիւանդներուն վրայ: Մենք պէտք է հաւատքի հոսանքը բանանք եւ ձգենք, որ բուժիչ զօրութիւնը հասնի: Մինչ մենք այդ մէկը կ'ընենք, Աստուած մեզի հետ պիտի աշխատի՝ Իր Խօսքը նշաններով հաստատելով:

«Ուրեմն անոր, որ կարող է գերազանցօրէն աւելի ընել՝ քան ամէն ինչ որ մենք կը խնայենք կամ կ'ըմբռնենք, այն զօրութեան համեմատ՝ որ կը ներգործէ մեր մէջ...» (Եփ 3.20):

## ԽՄԲԱՅԻՆ ՔՆՆԱՐԿՈՒՄ

1. Արդեօք ինչո՞ւ այսօր շատեր, որոնք հաւատք կը դաւանին, չեն զգար բժշկութեան այն պայթուցիկ զօրութիւնը, որուն մասին սորվեցանք այս դասին մէջ:
2. Ի՞նչպէս կը բանանք հաւատքի հոսանքը մեր կեանքներուն մէջ, որպէսզի փորձառութիւնը ունենանք Աստուծոյ բուժիչ զօրութեան հոսքին:
3. Ճի՞շդ է, որ մենք՝ իբրև այսօրուան Հոգիով լեցուած հաւատացեալներ, օրին Պօղոսին ունեցած նոյն զօրութիւնը ունինք: Եթէ այդ մէկը ճիշդ է, ի՞նչպէս կրնանք այդ զօրութիւնը արձակել մարդոց կեանքներուն եւ կացութիւններուն մէջ:

## ԻՆՔՆԱՇԽԱՏՈՒԹԻՒՆ

1. Ուսումնասիրէ՛ բժշկութեան մասին հետեւեալ աստուածաբանական հատուածները եւ գրէ՛ իւրաքանչիւր պարագայի գործածուած ձեւին մասին.
  - ա. Թւ 21.4-9
  - բ. Դ.Թգ 5.1-14
  - գ. Ես 38.1-4, 21
  - դ. Մր 5.25-34
  - ե. Յհ 9.1-7
  - զ. Գրծ 19.11-12
2. Կրնո՞ւ Աստուածաբանչիւն մէջ գտնել ուրիշ որեւէ տեղ, ուր այդ ձեւերէն որեւէ մէկը կրկնուած է:
3. Այս օրինակներուն ընդմէջէն ի՞նչ կարելոր դաս կամ դասեր կրնաս քաղել Աստուծոյ կողմէ հիւանդները բուժելու ձեւերուն մասին:

**ԳԵՐԲՆԱԿԱՆ ԿԵԱՆՔ**  
**ԻՆՆԵՐՈՐԴ ՊԱՀ**  
**Բժշկութեան Բառեր Արտասանել**

**ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆ**

Մեծ գորութիւն կայ մեր արտասանած բառերուն մէջ: Մեր ժխտական բառերը կրնան կործանում յառաջացնել: «Մարդուն բերանին խօսքերը խորունկ ջուրեր են. իմաստութեան աղբիւրը առատաբուխ վտակ մըն է... Անմիտին բերանը իրեն կործանում է, եւ անոր շրթունքը իր անձին որոգայթ է» (Առ 18.4, 7):

Այն բառերը, զորս կ'արտասանենք կրնան արձակել մահուան գորութիւնը կամ կեանքի գորութիւնը:

«Մարդուն փորը իր բերանին պտուղէն կը կշտանայ. իր շրթունքին արդիւնէն կը յագեցնայ: Մահն ու կեանքը լեզուին ձեռքն են. զայն սիրողները անոր պտուղը կ'ուտեն» (Առ 18.20-21):

Վերջին դասին մէջ մենք սորվեցանք, որ հաւատքը, ինչպէս արիւնհոսութիւն ունեցող կնոջ հաւատքը, միշտ կը խօսի: Երբ հաւատքը խօսի, հզօր բաներ տեղի կ'ունենան: Երբ մենք մեր ձեռքերը հիւանդներուն վրայ կը դնենք, մենք հաւատքի հոսանքը կը բանանք եւ Աստուծոյ գորութիւնը կ'արձակենք:

**ԴԱՍԻ ՆԱԽԱԳԻԾ**

**I. ԲՈՒԺՈՒՄ՝ ՅԻՍՈՒՄԻ ԱՆՈՒՆԸ ԱՐՏԱՍԱՆԵԼՈՎ (ՓլՊ 2.9-11)**

Ա. Յիսուսի անունը գործածելու իրաւունքը

1. Ամէն անհանգստութիւն եւ հիւանդութիւն անուն ունի:

ա. Քաղցկեղը անուն մըն է:

բ. Յօդացաւը անուն մըն է:

2. Սակայն Յիսուսի անունը բարձր է բոլոր անուններէն:

ա. Երբ մենք հաւատով Յիսուսի անունը կու տանք, ամէն անհանգստութիւն եւ հիւանդութիւն պէտք է խոնարհի:

բ. Քաղցկեղը պէտք է խոնարհի...

գ. Յօդացաւը պէտք է խոնարհի...

3. Յիսուս մեզի տուաւ Իր անունը գործածելու իրաւունքը: Ան ըսաւ՝ «Սա՛ հեանները պիտի հետեւին անոնց՝ որ կը հաւատան. - իմ անունովս ... ձեռք պիտի դնեն հիւանդներու վրայ, եւ անոնք պիտի առողջանան» (Մր 16.17, 18):

Բ. Կազ մարդը բուժուեցաւ Յիսուսի անունով (Գրժ 3.6-8):

1. Այդ մարդուն բժշկութեան բանալին Պետրոսի եւ Յովհաննէսի հաւատքն էր Յիսուսի անունին նկատմամբ:

2. Պետրոս ըսաւ՝ «Անոր անունին հաւատով» անոր անունը ամրացուց ասիկա, որ դուք կը տեսնէք եւ կը ֆանջնաք: Անով եղած հաւատքն է՝ որ առողջացուց զայն ձեր բոլորին առջեւ» (Գրժ 3.16):

## II. ԲԺՇԿՈՒԹԻՒՆ՝ ՎԱՏԱՌՈՂՁՈՒԹԵԱՆ ՈԳԻՆԵՐԸ ՍԱՍՏԵԼՈՎ ԵՒ ՎՏԱՐԵԼՈՎ

Ա. Սատանան, որ եկած է գողնալու, սպանելու եւ քանդելու, յաճախ վատառողջութեան ոգիներ կը գործուղէ, որպէսզի անհանգստութեան եւ հիւանդութեան կապանք եւ մահ բերէ մարդկութեան (Ղկ 13.11-13):

- Երբ Շաբաթ օրը բուժում կատարած ըլլալուն համար հրեայ կրօնական ղեկավարը ասպարէզ կարգաց Յիսուսի, Ան պատասխանեց՝ «Հապա ասիկա՝ որ Աբրահամի աղջիկ էր, եւ ահա՛ տասնուր տարի Սատանան կապած էր գայն, պէտք չէ՞ր որ Շաբաթ օրը արձակուէր այդ կապէն»:

Բ. Յիսուս բուժումներ կատարեց ոգիներ վտարելով:

1. «Նազարէթէն եդող Յիսուսը, որ Աստուած օժեց Սուրբ Հոգիով եւ գորութեամբ, շրջեցաւ բարիք գործելով ու բժշկելով բոլոր Չարախօսէն ճեռուածները...» (Գրծ 10.38):

- Յիսուսի առաքելութեան մէկ կարեւոր մասը դիւային ոգիներ վտարելն է:

2. Համբարութեան ոգին

- «Երբ անոնք դուրս ելան, ահա՛ համբար դիւային մարդ մը բերին իրեն: Երբ դէռ ելաւ, համբար խօսեցաւ» (Մտ 9.32-33):

3. Խուլ եւ համբ

- «Յիսուս՝ երբ տեսաւ թէ բազմութիւնը կը խոնուի շուրջը, սաստեց անմաքուր ոգին եւ ըսաւ անոր. «Հա՛մբ ու խո՛ւլ ոգի, կը հրամայեմ քեզի, ելի՛ր ատկէ, եւ անգա՛մ մըն ալ մի՛ մտներ անոր մէջ»: Ոգին աղաղակելով՝ սաստիկ ցնցեց գայն ու ելաւ» (Մր 9.24-25):

4. Դոյ ու ցնցում

ա. Լուսնոտ սղան մեծապէս կը տառապէր, տրուած ըլլալով, որ դէռ զինք յաճախ կրակի կամ ջուրի մէջ կը նետէր:

բ. «Յիսուս սաստեց գայն, դէռ ելաւ անկէ, ու պատանին բժշկուեցաւ նոյն ժամուն» (Մտ 17.17):

5. Կոյր եւ համբ

- «Այն ատեն բերին իրեն կոյր ու համբ դիւային մը, եւ բուժեց գայն, այնպէս որ համբն ու կոյրը խօսեցաւ եւ տեսաւ» (Մտ 12.22):

Գ. Բժշկութեան ծառայութիւն՝ դէներ վտարելով:

1. Այն հիւանդութիւնները, գորս բժշկութիւնը «անբուժելի հիւանդութիւններ» կը կոչէ յաճախ հետեւանքն եւ վատառողջութեան ոգիներու:

- Հոգիներու զանազանութեան պարգեւը կիրարկելով, մենք պիտի կարենանք բնորոշել զանոնք եւ դուրս վտարել:

2. «Սա՛ նշանները պիտի հետեւին անոնց՝ որ կը հաւատան. – դէւէ՛ր դուրս պիտի հանեն իմ անունովս» (Մր 16.17):

3. Յիսուս մեզի իշխանութեան բանալիները տուած է կապելու եւ քանդելու այս աշխարհին վրայ: Յիսուս ըսաւ՝ «Երկինքի թագաւորութեան բանալիները պիտի տամ քեզի, եւ ի՛նչ որ երկրի վրայ կապես՝ երկինքի մէջ կապուած պիտի ըլլայ, ու ի՛նչ որ երկրի վրայ արձակես՝ երկինքի մէջ արձակուած պիտի ըլլայ» (Մտ 16.19):

ա. Այդ իշխանութեամբ մենք կրնանք ըսել՝ «Սատանա՛, ես կը կապեմ քեզ՝ Յիսուսի անունով... Դո՛ւն, քաղցկեղի ոգի, Յիսուսի անունով կը հրահանգեմ քեզի, որ դուրս գաս այս մարդէն...»

բ. Մենք ալ կրնանք ըսել՝ «Ո՛վ կին, ազատած ես վատառողջութենէդ»:

## III. ՍՏԵՂԾԱԳՈՐԾ ՀՐԱՇՔՆԵՐ ԱՐՏԱՍԱՆԵԼ

Ա. Շատ մարդիկ մարմինի կարգ մը անդամներ չունին՝ ի ծնէ թերահուրեան, արկածներու կամ վիրահատութեան պատճառով:

1. Աստուած, որ մեզ Իր պատկերին նմանութեամբը ստեղծեց, Իր բերանէն հնչած խօսքով կատարեց այդ մէկը:
2. Մենք ալ կրնանք ստեղծագործ հրաշքներ կատարել մեր հաւատքով խօսած բառերով:  
ա. Եսային գրեց՝ «Շրթունքներուն պտուղը ես կը ստեղծեմ ...» (Ես 57.19):  
բ. Այս համարը կը վերջանայ հետեւեալ բառերով՝ «Ես զինք պիտի բուժեմ»:

Բ. Դուն կը բուժեմ հիւանդները:

1. Շատեր ըսած են՝ «Ես չեմ կրնար հասնի մը անգամ բուժել»: Սակայն Յիսուս ըսաւ «... Ա՛ն որ կը հաւատայ ինձի, ի՛նք ալ պիտի ընէ այն գործերը...» (Յի 14.12):
2. «Յիսուս բարկութեամբ շուրջը նայեցաւ՝ անոնց վրայ, տրամելով անոնց սիրտին կուրուրեան համար, ապա ըսաւ այդ մարդուն. «Երկարէ՛ ձեռքդ»: Ան ալ երկարեց, եւ անոր ձեռքը առողջացաւ» (Մր 3.5):
3. Յիսուս բժշկելու նոյն գորութիւնն ու իշխանութիւնը տուաւ Իր աշակերտներուն:  
ա. «Յետոյ, բովը կանչելով տասներկու աշակերտները, իշխանութիւն տուաւ անոնց՝ անմաքուր ոգիներուն վրայ, որպէսզի դուրս հանեն զանոնք, ու բուժեն ամէն տեսակ ախտ եւ ամէն տեսակ վատառողջութիւն» (Մտ 10.1):  
բ. Յիսուս շարունակեց հետեւեալ հրահանգով. «Բուժեցէ՛ք հիւանդները, մաքրեցէ՛ք բորոտները, հանեցէ՛ք դէտերը. ձրի՛ ստացած էք, ձրի՛ տուէ՛ք» (Մտ 10.8):

Գ. Լերան ըսէ՛ք

1. «Յիսուս պատասխանեց անոնց. «Հաւատ՛ք ունեցէ՛ք Աստուծոյ վրայ: Որովհետեւ հեռա՛րտապէս կը յայտարարեմ ձեզի. ո՛վ որ ըսէ այս լերանը. ելի՛ր ու ծո՛վը նետուէ, եւ չտատամսի իր սիրտին մէջ, հապա հաւատայ թէ ի՛նչ որ ըսէ՛ կ՛ըլլայ, պիտի ըլլայ անոր՝ ի՛նչ որ ըսէ՛»» (Մր 11.22-23):
2. Յաճախ «անբուժելի հիւանդութիւններ» եւ ստեղծագործ հրաշքներու պէտքը կը թուին լեռներ ըլլալ անոնց համար, որոնք պէտք ունին բժշկութեան կամ անոնց համար, որոնցմէ կը խնդրուի բժշկութեան ծառայութիւնը կատարել տուեալ անձի մը համար:  
ա. Այս համարը չ՛ըսէր, որ մենք պէտք է աղօթենք, որ այդ լեռը տեղափոխուի:  
բ. Հաւատացեալը պիտք է «ըսէ այս լերանը. «Ելի՛ր ու ծո՛վը նետուէ՛»»:  
գ. Ըսել կը հեռանակէ՛ իշխանութեամբ հրահանգել:  
3. Շատեր կը թուին հաւատացած ըլլալ, թէ այդպիսի պայմաններ դիմագրաւելու պարագային, մենք պէտք է «աղօթենք» եւ Աստուծմէ խնդրենք, որ բժշկէ:  
ա. Սակայն այս համարը չ՛ըսէր «աղօթէ՛»:  
բ. Ան կ՛ըսէ՛ «ըսէ՛»:  
գ. Յիսուսի առաքելութեան կամ Գործք Առաքելոց գիրքին մէջ չկան օրինակներ, ուր մարդիկ կը բժշկուին անոնց վրայ աղօթելով:  
4. Յիսուս այսօր իւրաքանչիւր Հոգիով լեցուած հաւատացեալի կ՛ըսէ՛ «Ես ձեզի տուած եմ Իմ անուան իշխանութիւնը, Իմ Հոգիիս գորութիւնը ինչպէս նաեւ իշխանութիւնն ու գորութիւնը Իմ Խօսքս խօսելու:  
ա. Դուն կը բժշկէ՛ք հիւանդները...  
բ. Դուն ձեր ձեռքերը կը դնէ՛ք հիւանդներուն վրայ եւ անոնք պիտի ապագինին:

IV. ԲՈՒԺԵԼ՝ ԽՕՍՔԸ ԽՕՍԵԼՈՎ

- «Իր խօսքը կը դրկէ ու գանոնք կը բուժէ, եւ կ'ազատէ իրենց փոսերէն» (Մդ 107.20):

Ա. Խօսքը խօսիլ հաւատքով

1. Մենք Խօսքը կը գործողդենք երբ Խօսքը համարձակութեամբ կ'արտասանենք մեր բերաններէն:

2. Երբ մենք հաւատքով կ'արտասանենք Խօսքը, անիկա արդիւնք պիտի տայ (Ես 55.10-11: Հո 10.8-11):

Բ. Խօսքը արտասանէ՛ եւ իմ ծառայ պիտի բուժուի (Մտ 8.5-8)

1. Հաւատքը սփանչելիքներու բանալին է երբ իշխանութեամբ կը կիրարկուի:

2. Հարիւրապետը շարունակեց ըսելով, թէ ինք կը հասկնար Խօսքը խօսելու իշխանութիւնը, որովհետեւ ինքն ալ իշխանութեան տակ էր:

3. «Երբ Յիսուս լսեց՝ գարնացաւ, եւ ըսաւ իր հետեւորդներուն. «Ճշմարտապէս կը յայտարարեմ ձեզի, Իսրայէլի մէջ անգամ ես չգտայ ա՛յսչափ մեծ հաւատ»» (Մտ 8.10):

## ԵԶՐԱԿԱՑՈՒԹԻՒՆ

Բժշկության ծառայությունը կատարած պահուն մեկն պետք է հաւատով լեցուն բառեր արտասանենք: Մենք պետք է Յիսուսի անունը տանք ... Մենք պետք է վատառողջության ոգիներուն հրահանգենք, որ դուրս գան ... Մենք պետք է ստեղծագործ հրաշքներ արտասանենք, եւ մեկն պետք է Աստուծոյ Խօսքը խօսինք: Այն հաւատքը, որ համարձակօրէն կը խօսի եւ կը գործէ, հոսանքը արձակող բանալին է...

## ԽՄԲԱՅԻՆ ՔՆՆԱՐԿՈՒՄ

1. Որո՞ւն կը տրուի Յիսուսի անունի իշխանությունը գործածելու իրաւունքը:
2. Տրուած ըլլալով, որ Յիսուս պատուիրեց մեզի հիւանդներ բժշկել, եւ իր անունի իշխանությունը տուաւ մեզի այդ մէկը ընելու համար, պէ՞տք է, որ աղօթենք Իրեն այսօր, որպէսզի գայ եւ հիւանդները բժշկէ:
3. Քննարկեցէ՛ք հետեւեալ հաստատումը. «Յիսուսի առաքելութեան կամ Գործք Առաքելոց գիրքին մէջ չկան օրինակներ մարդոց, որոնք աղօթքով կը բժշկուին»:
4. Եթէ ձեր խումբին մէջ կան մարդիկ, որոնք հարցերու կամ հիւանդություններու լեռներ ունին իրենց դիմաց, կը թելադրենք, որ գործածէք Խօսքին իշխանությունը եւ հրահանգէք անոնց լեռներուն, որ «սեղափոխուին»:

## ԻՆՔՆԱՇԽԱՏՈՒԹԻՒՆ

1. Հոգեպէս անելու ձեւերէն մէկը Գրք 17.10-11ի բերիացիներուն սովորությունը որդեգրելն է:
  - ա. Բա՛ց Համաբարբառը եւ փնտռէ՛ Աւետարաններուն եւ Առաքեալներուն Գործերը գիրքին մէջ նշուած բժշկություններուն համեմատությունները:
  - բ. Կրնա՞ս գտնել որեւէ օրինակ, ուր մարդու մը համար աղօթած են նախքան անոր բժշկուիլը:
2. Եթէ օրինակներ գտնես, ցանկագրէ՛ անոնց համեմատությունները:

**ԳԵՐԲՆԱԿԱՆ ԿԵԱՆՔ**  
**ՏԱՍՆԵՐՈՐԴ ՊԱՀ**  
**Հաղորդում՝ Ձեռք Դնելով**

**ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆ**

Հգոր բաներ կը պատահին երբ մենք, Հոգիին հնազանդելով, հաւատով մեր ձեռքը կը դնենք ուրիշին վրայ: Իսկական եւ շօշափելի հաղորդում մը տեղի կ'ունենայ: Ձեռք դնելը հպում մըն է՝ Աստուծոյ ուժի հոսանքին փոխանցման համար: Ասիկա կը կոչուի հպումի եւ փոխանցման օրէնքը:

Յիսուս ըսաւ՝ «... ձեռք պիտի դնեն հիւանդներու վրայ, եւ անոնք պիտի առողջանան» (Մր 16.18):

**ԴԱՍԻ ՆԱԽԱԳԻԾ**

**I. Ձեռք Դնելու ԱՍՏՈՒԱԾԱՇՆՁԱԿԱՆ ՕՐԻՆԱԿՆԵՐ**

**Ա. Տարրական Սկզբունք Մը**

- Եբրայեցիներու գիրքին հեղինակը կը նշէ ձեռք դնելը իբրեւ Յիսուսի տարրական սկզբունքներէն մէկը (Եբր 6.1-2):

**Բ. Մեղքերը փոխանցել գաւառեան նոխազի մը**

1. Քաւութեան Օրը Ահարոն Քահանայապետը իր երկու ձեռքերը դրաւ ողջ նոխազի մը գլխուն վրայ եւ խոստովանեցաւ Իսրայէլի որդիներուն անօրէնութիւններն ու մեղքերը (Ղկ 16.21):
2. Գաւառեան նոխազը օրինակն էր Քրիստոսի, որ ժողովուրդին անօրէնութիւններն ու մեղքերը իր վրան առաւ:

**Գ. Իմաստութեան հոգին կը փոխանցուի Յետուին:**

- «Նաւէի որդին՝ Յետու իմաստութեան հոգիով լեցուած էր, որովհետեւ Մովսէս իր ձեռքերը անոր վրայ դրեր էր...» (Բ.Օր 34.9):

**Դ. Մկրտութիւնը Սուրբ Հոգիին պարգեւներուն հաղորդումով:**

1. Պօղոս Սուրբ Հոգիին հաղորդեց Եփեսոսի հաւատացեալներուն՝ ձեռք դնելով անոնց վրայ:
  - «Ու երբ Պօղոս ձեռք դրաւ անոնց վրայ՝ Սուրբ Հոգին եկաւ անոնց վրայ, եւ լեզուներ կը խօսէին ու կը մարգարէանային» (Գրծ 19.6):
2. Պօղոս ձեռք դնելով Սուրբ Հոգիին պարգեւը հաղորդեց Տիմոթէոսին:
  - «Ուստի կը վերյիւստանային քեզի՝ որ արժարձեւ Աստուծոյ շնորհը, որ տրուեցաւ քեզի՝ երբ ձեռնադրեցի քեզ» (Բ.Տմ 1.6):
3. Ձեռք դնելը պէտք է թերեւորեամբ առնուի:
  - ա. Պօղոս գրեց Տիմոթէոսին. «Ահապարելով ձեռք մի՛ դնէր ...» (Ա.Տմ 5.22):
  - բ. Նախօրէն առաքելութեան մէջ հաստատելու համար ուրիշներու վրայ ձեռք դնելը, մենք պէտք է գգոյց ըլլանք անոնց քննարկութիւնը եւ ծառայութեան պատուը գիտնալու եւ հանձնալու:
    - գ. Պօղոս գրեց՝ «Կը թախանձենք ձեզի, եղբայրներ, որ հանձնաք ձեր մէջ աշխատողները...» (Ա.Թս 5.12):

**II. Ձեռք Դնելու ԲԺՇԿԵԼՈՒ ՅԻՍՈՒՍԻ ՕՐԻՆԱԿՆԵՐԸ**

**Ա. Բորոտը**

- «Բորոտ մըն ալ եկաւ. կ'աղաչէր, կը ծնրապէր ու կ'ըսէր անոր. «Եթէ ուզես՝ կրնա՛ս մաքրել»: Յիսուս գրաւով՝ երկարեց ձեռքը, դպաւ անոր ու ըսաւ. «Կ'ուզե՛ս, մաքրուէ՛»» (Մր 1.40-41):

**Բ. Յայրսին աղջիկը**

1. Երբ Յիսուս Յայրուսին ընկերացաւ դէպի անոր տունը՝ անոր աղջիկը մեռելներէն յարուցանելու համար, Ան նախ դուրս հանեց բոլոր ձայրողներն ու անհաւատները:
2. «Մանուկին ձեռքէն բռնելով՝ ըսաւ անոր. «Տալիքա՛ կուսի՛», որ կը թարգմանուի. «Աղջի՛կ, (քեզի՛ կ'ըսես), ոտքի՛ ելիր՛»: Իսկոյն աղջիկը կանգնեցաւ եւ քալեց, որովհետեւ տասներկու տարեկան էր. ու տեսնողները հիացումէն գմայլեցան» (Մր 5.41-42):

#### Գ. Մարդ

1. Յիսուս խօսելու դժուարութիւն ունեցող խուլ մարդը բժշկեց Իր մատները դնելով անոր մարմինի այն մասերուն վրայ, որոնք վնասուած էին:
2. «...Իր մատները միտեց անոր ականջներուն մէջ ու քֆեց, եւ դպաւ անոր լեզուին. ապա երկինք նայելով՝ հռաչեց ու ըսաւ անոր. «Եփփարա՛», (որ ըսել է՝ բացուէ՛.) իսկոյն բացուեցան անոր ականջները եւ քալուեցաւ անոր լեզուին կապը, ու շիտակ կը խօսէր» (Մր 7.33-36):

### III. ԳՈՐԾՆԱԿԱՆ ՑՈՒՑՄՈՒՆՔՆԵՐ ԲԺՇԿԵԼՈՒՄ՝ ՁԵՌՔ ԴՆԵԼՈՎ

#### Ա. Գտիր պէտքը

1. Նախ պէտք է գտնէք պէտքը, կա՛մ գիտութեան խօսքի պարզելին կիրարկումով կամ ալ ուրիշ անձէ մը տեղեկանալով խնդրոյ առարկայ անձին ձեր ծառայութեան դիմելուն պատճառին մասին:
2. Երբեմն անձը բացայայտ պատճառին համար բուժուելու եկած չըլլար:
  - ա. Անուանոր արտաքին մը վրայ նստած մէկը կրնայ իր շաքարախտէն բուժուելու համար եկած ըլլայ ձեր հով:
  - բ. Եթէ ժամանակը կը ներէ, հարցուցէք եւ փորձեցէք գիտնալ ճիշդ ինչի՞ կը հաւատայ անձը այդ պահուն:
3. Հարցումը այնպէս հարցուցէք, որ «հաւատքի պատասխան» մը ստանաք անկէ փոխանակ ժխտական պատասխան մը:
  - ա. Փորձեցէք անոնց հաւատքի՛ խօսքեր խօսիլ տալ փոխանակ կասկածի մինչ կը պատմեն իրենց կացութեան ժխտական մանրամասնութիւնները:
  - բ. Փորձեցէք այնպէս ընել, որ անձը հաւատքով արտայայտուի այն բաներուն մասին, որոնց կը յուսայ: Այնպէս ըրէք, որ իրենց հաւատքը արտայայտեն «այսօրուան» իրականութեան համաձայն:
4. Փոխանակ հարցնելու՝ «Ի՞նչ է ձեր հարցը», հարցուցէք՝ «Ի՞նչ կը հաւատաս, որ Աստուած պիտի ընէ այս պահուն»:
  - Հաւատքի պատասխան մը պիտի ըլլայ հետեւեալը՝ «Ես կը հաւատամ, որ այս պահուն Աստուած ամբողջովին պիտի բժշկէ զիս շաքարախտէն»:

#### Բ. Դպէ՛ք մարմինի այն մասին, որ պէտք ունի բժշկուելու:

1. Բուժիչ գորութիւնը պիտի փոխանցուի հպումի եւ փոխանցումի օրէնքով: Այդ մէկը կը նմանի էլեկտրականութիւնը հոսեցնելու համար երկու էլեկտրական թելեր իրարու կցելուն:
2. «Այն ատեն դպաւ անոնց աչքերուն եւ ըսաւ. «Թող ըլլայ ձեզի՛ ձեր հաւատքին համեմատ՛»» (Մտ 9.29):
3. Մենք կ'ուզենք, որ գորութիւնը ուղղակիօրէն հոսի անձին մարմինին այն մասին մէջ, որ պէտք ունի բուժուելու:
  - ա. Եթէ բուժում պահանջող մասը ամօթաճութիւն պատճառող մաս մըն է անձին մարմինին վրայ եւ ան հակառակ սեռին կը պատկանի, ապա պէտք է մեր իմաստութիւնը գործածենք եւ կա՛մ մեր ձեռքը դնենք անձին գլխուն վրայ կամ ալ իրմէ խնդրենք, որ իր ձեռքը դնէ այդ բաժինին վրայ եւ մենք մեր ձեռքը դնենք անոր ձեռքին վրայ:
  - բ. Լաւագոյն ձեռք կիները կիներուն վրայ ձեռք դնելն է եւ տղամարդիկը՝ տղամարդոց:

#### Գ. Մտային պատկեր կազմեցէք եւ արձակեցէք գորութեան հոսանքը:

1. Մինչ ձեր ձեռքերը կը դնէք հիւանդին վրայ եւ հաւատքով լեցուն բառեր կ'արտասանէք, պատկերացուցէք անոնց մարմինին բուժուիլը կամ վերականգնուիլը:
  - Հաւատքով, ձեր մէջ գտնուող բուժիչ գորութիւնը արձակեցէք, որ հոսի այդ մարդուն մարմինին մէջ:
2. Արձակեցէք ձեր հաւատքը՝ անձին բուժման համար եւ ոչ միայն անոր Աստուծոյ գորութեան տակ զգեստնուելուն համար:
  - ա. Շատեր կը բուժուին առանց Աստուծոյ գորութեան տակ զգեստնուելու:

բ. Ուրիշներ Աստուծոյ զօրութեան տակ կը զգետնուին՝ առանց բուժման նշան մը ստանալու:

3. Ձեր հաւատքը կեդրոնացուցէ՛ք՝ ձեր խօսքը յատուկ ձեռքով ուղղելով մարմինին վնասուած բաժինին:

ա. Երբեմն Հոգիին կողմէ կ'առաջնորդուինք արագօրէն դաշչելու եւ արագօրէն գործելու:

բ. Ուրիշ անգամներ մենք կ'առաջնորդուինք մեր ձեռքերը պահելու անձին վրայ եւ որոշ ժամանակ մը զօրութեան հոսքը շարունակելու:

Դ. Ձեր աչքերը բաց պահեցէ՛ք եւ ակնկալեցէ՛ք կատարումը:

1. Աչքեր գոցելը կրօնական դրսեւորում մըն է կասկածի եւ անհաւատութեան:

ա. Յիսուս ըսաւ՝ «Արթն'ն կեցէ՛ք եւ աղօթեցէ՛ք...» (Մտ 26.41):

բ. Եթէ Մատթիոսը, Մարկոսը եւ Յովհաննէսը գոցած ըլլալին իրենց աչքերը այն միջոցին երբ Յիսուս հիւանդները կը բուժէր, անոնք պիտի չկարենային նկարագրել հրաշքերը:

2. Երբեմն մենք կ'ըլլանք կացութեան մը մէջ, ուր պէտք է բժշկութեան ծառայութիւնը կիրարկենք մեծ թիւով մարդոց, կարճ ժամանակուան մը մէջ: Այդպիսի պարագաներու հիանալի օժուրիւն մը կու գայ հիւանդները բուժելու:

ա. Այդպիսի պարագաներու մենք պէտք է զգոյշ ըլլանք որ չարտօնենք, որ ռեւէ մէկը կասեցնէ մեր ծառայութիւնը՝ իր անձին մասին երկար մանրամասնութիւններ պատմելու համար: Այդ մէկը յաճախ կը տրամեցնէ Սուրբ Հոգին:

բ. Մենք պէտք է օժութեան ալիքին հետ յառաջանանք եւ ձեռք դնենք կարելի եղածին չափ մեծ թիւով մարդոց վրայ:

Ե. Բժշկութեան ծառայութիւնը կատարել մեծ բազմութիւններու համար:

1. Կարգ մը պարագաներու, երբ մեծ բազմութիւններու համար բժշկութեան ծառայութիւնը կը կատարենք, Աստուծո՛վ գիտութեան խօսքի պարգեւով, պիտի առաջնորդէ մեզ, որ բժշկութիւններ յայտարարենք եւ ապա համարձակօրէն հաշակենք, թէ ի՛նչ կը կատարէ Աստուծո՛վ:

2. Ուրիշ անգամներ Աստուծո՛վ կ'առաջնորդէ մեզ, որ համարձակօրէն սկսինք սաստել եւ վտարել վատաոլջութեան ոգիները Յիսուսի անունով:

3. Երբեմն շատեր կը սկսին ալիքներու նման իյնալ Աստուծոյ զօրութեան ներգործութեան տակ:

• Բանալին Սուրբ հոգիին մտիկ ընելը եւ Անոր օժութեան առաջնորդութեամբ գործելն է:

4. Պէտք է յիշենք սակայն որ զանգուածային-հրաշքի աւետարանչութիւնը առանձին գործը պիտի չամբողջացնէ:

• Աւետարանչութեան Նոր Կտակարանի ձեռք անձնական հրաշքի աւետարանչութիւնն է՝ իւրաքանչիւր հաւատացեալի հետեւող նշաններով եւ սխալելիքներով, մինչ անոնք կը վկայեն ուր որ երթան:

Զ. Բժշկութիւն՝ հաւատքի համարձակ կիրարկումով

1. Մենք սարկեցանք, թէ երբ հաւատքը գոյութիւն ունի, մի՛շտ նշաններ տեղի կ'ունենան:

• Յակոբոս ըսաւ՝ «... հաւատքը մեռած (անգործ, անշարժ) է առանց գործերու (համապատասխան գործերու)» (Յկ 2.26):

2. Օրինակներ

ա. Բերքեզդայի աւագանին մօտ գտնուող մարդը

• Յիսուս Բերքեզդայի աւագանին մօտ գտնուող կող մարդուն ըսաւ՝ «Ուտի՛ ելիր, ա՛ն մահիւնդ ու ֆալէ» (Յհ 5.8):

բ. Կոյր մարդը

• Աչքերը հողով եւ Իր թուֆով շինուած կառով ձեփելէ ետք, Յիսուս կոյր մարդուն ըսաւ՝ «Գնա՛, լուացուէ՛ Սելովամի աւագանին մէջ» (Յհ 9.7):

գ. Չորցած ձեռքով մարդը

i. «Այն ատեն ըսաւ այդ մարդուն. »Երկարէ՛ ձեռքդ“: Ան ալ երկարեց, եւ առողջացաւ միւսին պէս» (Մտ 12.13):

ii. Յիսուս կ'ըսէր՝ «Գործեցէ՛ք ձեր հաւատքով...Անկարելին կատարեցէ՛ք... Համարձակօրէն գործի լծուեցէ՛ք...»

iii. Յանախ անձի մը համար բժշկութեան ծառայութիւնը կատարելէ ետք, անմիջապէս համարձակօրէն կ'ըսենք՝ «Քննէ՛ մարմինդ... Ըրէ՛ այն ինչ որ չէիր կրնար ընել նախապէս... Շարժէ՛ ձեռքդ... Ծնի՛ր...»

iv. Ապա համարձակօրէն կը հարցնենք՝ «Յա կը զգա՞ս տակաւին»։ Եթէ արտահայտուի որ բոլորովին չեն անհետացած, մենք համարձակօրէն կ'ըսենք՝ «Անգամ մը եւս քննէ՛... Նորէն ծնի՛ր...»։

#### IV. ԱՐԳԵԼՔՆԵՐ ԲԺՇԿՈՒԹԵԱՆ ԴԷՄ

Ա. Դէմ դնել կասկածներու եւ անհաւատութեան

1. Յանախ երբ մենք բժշկութեան ծառայութիւնը կը կատարենք հիւանդներու համար, դէմ յանդիման կը գտնուինք կասկածներու եւ անհաւատութեան, ինչպէս Յիսուսին պատահեցաւ Նազարէթի մէջ, ուր չկրցաւ մեծ հրաշքներ ընել։
2. Մենք պէտք է նախ կասկածներուն եւ անհաւատութեան հարցը լուծենք, որպէսզի կարենանք մեր ծառայութիւնը կատարել հաւատքի մթնոլորտի մը մէջ։
  - Առիթով մը Յիսուս ծաղրողները (կասկածողները) սեղծեցին դուրս դրաւ։
3. Յանախ նախ ժամանակ կը տրամադրենք հաւատ կառուցելու՝ սորվեցնելով, թէ ինչ կ'ըսէ Խօսքը բժշկութեան մասին եւ ապա կը պատմենք ուրիշներու հետ պատահած բժշկութիւններու մասին։
  - Մենք կրնանք խուսափիլ ձախողութիւններէ եթէ ժամանակ տրամադրենք լսելու գիտութեան խօսքով եւ իմաստութեան խօսքով Աստուծոյ կողմէ մեզի յայտնուածները նախքան մեր ծառայութեան սկսիլը։

Բ. Հաւատքի մէջ կանգնիլ

1. Կը պատահի, որ մենք անմիջական վտիվոյտութիւն չենք տեսներ անձին արտահայտուի մէջ։
  - ա. Այդ պարագաներուն կարեւոր է օգնել այդ անձին, որ չյուսալքուի եւ բժշկութեան հաւատքը չկորսնցնէ։
  - բ. Երբայցեցիներու գիրքին հեղինակը կը գրէ՝ «...մինչեւ վախճանը հաստատ բռնենք մեր սկիզբի վստահութիւնը» (Եբր 3.14)։
2. Պէտք է բացատրել անոնց ակնբարքի մէջ կատարուող հրաշքին եւ ժամանակի ընթացքին արտահայտուիները անհետացող բժշկութեան միջեւ գոյութիւն ունեցող տարբերութիւնները։
  - ա. Աստուծոյ զօրութիւնը, որ այդ մարդուն մարմինին մէջ մտաւ երբ մեր ձեռքը դրինք անոր վրայ, պիտի շարունակէ աշխատիլ այնքան ատեն, որ հաւատքը կը պահուի։
  - բ. Մենք տեսած ենք շատ մը նշանակալից բուժումներ, որ տեղի ունեցած են որոշ ժամանակուան մը ընթացքին մինչ անձը շարունակ պահած է իր հաւատքը՝ հաւատալով, խօսելով եւ Աստուծոյ Խօսքին նշանակութեան համաձայն գործելով։

#### ԵԶՐԱԿԱՑՈՒԹԻՒՆ

Իմ յայտարարութիւնս.

«Յիսուսին բառերը անոնց համար են, որոնք վստահ հաւատքով կը հաւատան։ Անոնք ձեռք պիտի դնեն հիւանդներու վրայ եւ անոնք պիտի բուժուին։ Ես հաւատացեալ մըն եմ եւ ո՛չ կասկածող մը։ Յիսուս ըսաւ այդ մէկը։ Կը հաւատամ, որ Յիսուս նշանակալից բուժումներ կը խօսի։ Ես համարձակ վկայ մըն եմ Յիսուսի համար ... ինչ ես կը հնազանդիմ քարոզելու եւ Աւետարանը ուրիշներու հետ բաժնեկցելու Յիսուսի պատուէրին, Աստուծոյ իմ հետս պիտի աշխատի՝ Իր Խօսքը հաստատելով բժշկութեան եւ հրաշքներու նշաններով, որոնք պիտի հետեւին ինձի ուր, որ երթամ... Ես հրաշք մըն եմ՝ Յիսուս Քրիստոսի գործող վկայ...»

## ԽՄԲԱՅԻՆ ՔՆՆԱԲԿՈՒՄ

1. Բաժնուեցե՛լք փոքր խումբերու եւ ձեռք գրե՛լք իրարու վրայ՝ Սուրբ Հոգիին ուժական գորութեամբը լեցուն Քրիստոսի առաքելութեան հաղորդումին համար:
2. Փա՛նք տուե՛ք Աստուծոյ ձեզ անգամ մը եւս լեցնելուն եւ ձեզի լաւագոյն պարգեւները տալուն համար՝ այն առաքելութեան համար, որուն Ինք կանչած է ձեզ:

## ԻՆՔՆԱՇԽԱՏՈՒԹԻՒՆ

1. Սերտե՛ք Եբր 6.1-2ը:
  - ա. Արդեօք այս հասուածը կը դատապարտե՞ ձեռք դնելու հիմնական սկզբունքը:
  - բ. Ի՞նչ կը սարկեցնէ ան մեզի:
2. Նե՛ղ կարգ մը օրինակներ Աստուածաշունչէն (տարբեր՝ այս դասին մէջ նշուածներէն), ուր մարդիկ ձեռք դնելով բժշկուած, Սուրբ Հոգիին մկրտութիւնը ստացած կամ ծառայութեան համար օծութիւնը ստացած են: